Azg

Մայիս 14 Ուրբաթ 1993

ՈՒՍԿՎՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիվ 90 (341)
գինը 10 ռ.
դասիչ 69149

Երևան 375010
Հանրապետության 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Վարդենիս

Տիֆի վարակը դեռևս հաստատված չէ

Մեր թերթի մայիսի 12-ի համարում տեղեկացրել էինք, որ Վարդենիսի շրջանում արձանագրվել է բծավոր տիֆի դեպք: Դեպքերի հետագա ընթացքին տեղեկանալու համար դիմեցինք ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա. Մկրտչյանին, որը մեզ հայտնեց, թե մեր հաղորդած լուրերը այնքան էլ ստույգ չէ: Փ դեպ, ասենք, որ մեր հրապարակած տվյալները վերցրել էինք նույն առողջապահության նախարարությունից), բանի որ Վարդենիսում այսօր հետազոտության մեջ են գտնվում 2 հիվանդ ընդամենը, որոնք բարձր ջերմություն ունեն: Սակայն դեռևս նրանց հիվանդությունը հաստատված չէ: Վերջնական եզրակացություն կլինի հետազոտությունների ավարտից հետո, որի մասին առողջապահության նախարարի տեղակալը խոստացավ տեղեկացնել:

«Ազգ»

Լուր

ԱՄՆ բարձր պաշտոնյաներ նախարարի մոտ

Մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Վահան Փափազյանն ընդունեց հատուկ հանձնարարությունների գծով դեսպան, ԱՄՆ պետքարտուղարի նորանկախ պետությունների հարցով հատուկ խորհրդական Սթրոբ Թալբոթին եւ նրա ղեկավարած պատվիրակությանը, որի կազմում էին նաեւ ազգային անվտանգության կոմիտեում նորանկախ պետությունների հարցերով նախագահի հատուկ խորհրդական Թոմի Գադին, պետքարտուղարի անկախ պետությունների եւ համագործակցության հարցերով գրասենյակի վարիչ Լարի Համերը եւ ազգային անվտանգության խորհրդում Կովկասի հարցերով պատասխանատու լորդ Մարեն Ֆորսայթը: Այս մասին հաղորդում են Հայաստանի արտգործնախարարության լրատվական ծառայությունից: Զրույցը ծավալվեց Հայաստանում տիրող իրավիճակի, դարաբաղյան հակամարտության կարգավորման, շրջանում խաղաղության հաստատման շուրջ: Վահան Փափազյանը նշեց, որ դարաբաղյան հակամարտությունը շատ հաճախ միջազգային ասյաններում դիտվում է որպես հակամարտություն Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, մինչդեռ այս դեպքում Հայաստանը երրորդ կողմ է, իսկ հակամարտող կողմերը Դարաբաղն ու Ադրբեջանն են: Ցիրս հարցադրումից կբխի նաեւ ցիրս պահանջ. անհապաղ, առանց որեւէ նախապայմանի զինադադար, բանակցություններ, որոնց կմասնակցի նաեւ Դարաբաղը: Այսպիսին է Հայաստանի տեսակետը հակամարտության կարգավորման խնդրում, նշեց Վահան Փափազյանը, եւ դրան են ուղղված մեր բոլոր քայլերը:

Նախարարը ներկայացրեց Ռուսաստան-ԱՄՆ-Թուրքիա խնդրո առարկայի շուրջ եռակողմ նախաձեռնության վերաբերյալ Հայաստանի վերաբերմունքը, խոսեց ՄԱԿի Անվտանգության խորհրդի ընդունած թիվ 822 բանաձեւի մասին՝ նշելով, որ Հայաստանն աջակցում է Անվտանգության խորհրդի պահանջներին՝ բանաձեւում ներկայացված կարգով եւ պատրաստ է սանձնել Հայաստանին վերաբերող գործողությունների պատասխանատվությունը: Այս առիթով Հայաստանի արտգործնախարարը նշեց, որ ինքն ուղեւորվել է հղել ՄԱԿի գլխավոր քարտուղար պրն. Բուտրոս Ղալիին: Ընդունելությանը ներկա էր առաջին փոխարտգործնախարար ժիրայր Լիպարիտյանը:

«Ազգ»

Միտերանը մտահոգված

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը մտահոգություն հայտնեց Լեռնային Դարաբաղի շուրջ ռազմական գործողությունների ծավալման կապակցությամբ: Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին հղած նամակում նա գրում է, որ Ֆրանսիան տարբեր մակարդակների հանդիպումների ժամանակ հանդես է եկել Քելբաջարի շրջանից հայկական ուժերը դուրս հանելու պահանջով: Նամակն Էլչիբեյին է հանձնել Ադրբեջանում Ֆրանսիայի դեսպան ժան Պիերենը, հաղորդեց Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունը: Միտերանն Էլչիբեյին կոչ արեց շարունակել հարցի կարգավորման ուղիներ փնտրել ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակներում եւ հայտնեց, թե Ֆրանսիական կառավարությունը որոշել է անհապաղ մարդասիրական օգնություն ցույց տալ Ադրբեջանցի փախստականներին:

ՌՖ

Պատմություն

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԵԾ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ

Կրկին հրետակոծվել է Կրասնոսելսկի շրջանը

Հակառակ որ Ադրբեջանի արտգործնախարարությունը երեկ մի հայտարարություն էր տարածել, թե իբր Հայաստանը հարձակումներ է գործում Նախիջեւանի վրա, խախտելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձեւի պահանջները եւ առաջացնելով, որ ծավալառաջական բաղադրություն է վարում, իրականում երեկ, ինչպես եւ նախորդ օրերին, շարունակվում էին ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումները Նախիջեւանում՝ Նեղկնաձորի շրջանի ուղղությամբ: Այս մասին հաղորդում են Հայաստանի պաշտպանության նախարարությունից:

Իրադրությունը շարունակում է լարված մնալ նաեւ Հայաստանի հյուսիսարեւելյան շրջաններում, որտեղ ավելի վաղ՝ մայիսի 12-ին Ղարաբաղի սահմանակից Ֆիզուլու շրջանում արձանագրվել են ադրբեջանական բանակի կասկածելի զորաշարժեր: Այս մասին հաղորդում է Սնարք գործակալությունը, վկայակոչելով ԼՂՀ լրատվության եւ մամուլի պետվարչությունից ստացված տեղեկությունները: Նման զորաշարժեր արձանագրվել են նաեւ Ղուբաթլիի շրջանում: Պետվարչությունում այն կարծիքին են, թե ադրբեջանական կողմը նախապատրաստվում է Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ գործողությունների, ինչով էլ բացատրվում է ռազմաճակատներում վերջին օրերին տիրող հարաբերական հանգիստը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ձեռնպահ են մնում պատասխան գործողություններից:

Մինչդեռ ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե մայիսի 13-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատի առանձին հատվածներում հայկական կազմավորումները հրետակոծել եւ գնդակոծել են Ֆիզուլու, Շահումյանի, Աղդամի եւ Ղուբաթլիի շրջանների բնակավայրերն ու ադրբեջանական բանակի դիրքերը: Ադրբեջանական կողմն իբր սպիտված է եղել պատասխան կրակ բացել: Տուժածների եւ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

ԵԱՀԽ-ն հայտարարել է, որ պատրաստ է 600 հոգանոց խաղաղարար ուժեր ուղարկել Լեռնային Ղարաբաղ խաղաղություն հաստատելու համար, եթե հայերը եւ ադրբեջանցիները համաձայնեն հրաղադար կնքել այնտեղ: Այս մասին հաղորդեց Ռոյթերը:

ՆՏ

Զարգացում

Կասկածելի զորաշարժեր Ֆիզուլիում

Երեկ եւ նախորդ գիշեր Լեռնային Ղարաբաղի սահմանակից Ֆիզուլու շրջանում արձանագրվել են ադրբեջանական բանակի կասկածելի զորաշարժեր: Այս մասին հաղորդում է Սնարք գործակալությունը, վկայակոչելով ԼՂՀ լրատվության եւ մամուլի պետվարչությունից ստացված տեղեկությունները: Նման զորաշարժեր արձանագրվել են նաեւ Ղուբաթլիի շրջանում: Պետվարչությունում այն կարծիքին են, թե ադրբեջանական կողմը նախապատրաստվում է Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ գործողությունների, ինչով էլ բացատրվում է ռազմաճակատներում վերջին օրերին տիրող հարաբերական հանգիստը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ձեռնպահ են մնում պատասխան գործողություններից:

Մինչդեռ ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե մայիսի 13-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատի առանձին հատվածներում հայկական կազմավորումները հրետակոծել եւ գնդակոծել են Ֆիզուլու, Շահումյանի, Աղդամի եւ Ղուբաթլիի շրջանների բնակավայրերն ու ադրբեջանական բանակի դիրքերը: Ադրբեջանական կողմն իբր սպիտված է եղել պատասխան կրակ բացել: Տուժածների եւ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

Զորք

Թուրքիան կարո՞ղ է փոխել Գրաչովի դիրքորոշումը

Պաշտոնական այցով Թուրքիայում գտնվող Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը շարունակում է իր հանդիպումները թուրքական բարձրաստիճան ղեկավարների հետ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, նախարարի կողմից այցի առաջին օրերին արված որոշ հայտարարություններ հիասթափեցրին թուրքական կողմին եւ Ադրբեջանին: Նախագահ Էլչիբեյի մամուլի քարտուղարը հայտարարեց, թե Գրաչովը Ադրբեջանին վարկաբեկելու փորձ է անում: Մյուս կողմից, չկարողանալով շրջանցել Ռուսաստան-Թուրքիա միջպետական պայմանագիրը, Գրաչովն ստորագրեց ռազմական ատոմարեզում եւ պաշտպանության արդյունաբերությունում համագործակցության մասին պայմանագիր:

Դժվար է ասել, թե ինչպիսի կոնկրետ պայմաններ է առաջարկել Ռուսաստանը Թուրքիային: Հավանական է, ուժի մեջ է մնացել նախարար Գրաչովի այն նախազգուշացումը, թե որոշ երկրներ Ադրբեջանին մատակարարում են զենք ու ռազմական տեխնիկա, որը համառորեն հերքեց Էլչիբեյի մամուլի ծառայությունը: Գրաչովի մամուլի քարտուղարությունից մեզ ասացին, թե այդ ամենին կարող է հստակ պատասխան տալ ինքը նախարարը վերադառնալուց հետո: Մինչդեռ Պավել Գրաչովի այցը շարունակվում է, եւ երեկ, ըստ նախնական ծրագրի, նա դեռեւ է այցելեր թուրքական բանակներից մեկը եւ հանդիպեր հրամանատարական անձնակազմի հետ: Այնուհետեւ նախատեսվում է, որ մինչ նախարարի վերադարձը որոշ երեկոյան, մեծ-տեղ կտրվի մշակութային ծրագրին: Գրաչովին կծանոթացնեն Անկարայի տեսարժան վայրերին, մշակույթի օջախներին: Արեւելյան ճոխ հյուրասիրությունից հետո նախարարը կվերադառնա Մոսկվա: Սովորականից ավելի երկար տեւած այս այցելությունը եւ թուրքերի դարեւով փորձված հյուրամենարանը կբերե՞ն արդյոք ռուս զինվորականին եւ արդյոք ո՞ւմ կողմ, ըստ երեւույթին իրեն երկար սոյասեցնել չի տա:

Ա. Հ.

ԵՄՀ

Շատրոնիկովը դեմ ուժի կիրառմանը

ԱՊՀ միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատար Եվգենի Շատրոնիկովը հայտարարեց, որ «կտրականապես դեմ է», որպեսզի հարավսլավական հիմնահարցը լուծվի ուժի միջոցով: «Մինչ այժմ չեն սպառվել այդ հակամարտության կարգավորման բոլոր քաղաքական միջոցները», նշեց նա լրագրողներին տված հարցազրույցում ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի նիստից առաջ: Հանդիպմանը մասնակցում էին Ադրբեջանի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի եւ Ուզբեկստանի պաշտպանությունները: Ուկրաինան պաշտպանության նախարարների խորհրդի նիստին չէր մասնակցում:

ՌՖ

Կոալիցիա

Նախաձեռնությունն ընթացքի մեջ

Երեկ Մոսկվայում սկսվելիք ռուս-թուրք-ամերիկյան հերթական բանակցությունները, որոնց պետք է մասնակցեին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները, մինչեւ ուշ երեկո դեռեւս չէին կայացել, մեզ տեղեկացրեց Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնյաներից մեկը, նշելով, թե նման կարգի խորհրդակցություններն անընդհատ շարունակվում են, ընդ որում բոլոր կողմերի հետ միաժամանակ: Խորհրդակցություններին մասնակցելու նպատակով Մոսկվա մեկնած ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Դավիթ Շահնազարյանն ու մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանը ամենայն հավանականությամբ կողմերին կներկայացնեն այն առաջարկները, որոնք մի քանի օր առաջ հրապարակվել էին եռակողմ միջնորդության առիթով:

Ա. Հ.

Լեռնարան

Արաբ-իսրայելական բանակցությունները կշարունակվեն հունիսին

Երեկ Վաշինգտոնում ավարտվեց արաբ-իսրայելական բանակցությունների ընթացիկ փուլը, որ հաստատվեց արաբական գրավյալ հողերում ապրող պաղեստինցիներին որոշ ինքնավարություն զիջելու առաջարկությամբ: Ցիրս է, առաջարկը պաղեստինցիների կողմից չընդունվեց, բայց եւ չմերժվեց: Բանն այն է, որ պաղեստինցիները, նկատի ունենալով Գազայում եւ այլուր վերջին օրերին դարձյալ բորբոքված ազգային-ազատագրական շարժումը, ցանկանում են ավելի կոնկրետ առաջարկություններով վերադառնալ տուն, գոնե հավելյալ խոստումով՝ թե հետագայում ավելի լայն ինքնավարություն կտրվի իրենց, մինչ իսրայելցիները հասկացնում են՝ այժմ ստացեք այն, ինչը տրվում է ձեզ, իսկ հետագայի համար այժմ ոչինչ խոստանալ չենք կարող: Այս մթնոլորտում, երեկ փակման նիստից առաջ, Մ. Նահանգների ներկայացուցիչը ներկայացրեց իսրայելցիների ու պաղեստինցիների տեսակետների տարբերությունները կամրջող մի փաստաթուղթ, սակայն պաղեստինյան եռանդամ մնացած պատվիրակությունը մեկնել էր արդեն: Բանակցությունները կշարունակվեն առաջիկա ամիս, ծգտիս թվականը կորոշվի ավելի ուշ:

Բանակցություններ Բելգրադում հանրաքվեի փոխարեն

Սերբիայի, Չեռնոգորիայի եւ սերբական Կրայինայի ղեկավարները սերբական հանրապետության ղեկավարներին առաջարկել են իրենց խորհրդարանների ներկայացուցիչների հանդիպում անցկացնել Բելգրադում: Ինչպես նշում է տեղական մամուլը, ըստ նախաձեռնողների մտահղացման, բանակցությունները պետք է անցկացվեն Բոսնիայում հանրաքվեի փոխարեն, որի ընթացքում մայիսի 15-16-ը նախատեսվում է պարզել բնակչության վերաբերմունքը Վենս-Օուենի ծրագրի նկատմամբ: Փորձագետները նշում են, որ այդ գաղափարը յուրօրինակ կանխիկ քայլ է, քանի որ հանրաքվեի ժամանակ բոսնիացի սերբերը, ամենայն հավանականությամբ, կմերժեն հակամարտության խաղաղ կարգավորման ծրագիրը: Բոսնիացի սերբերի խորհրդարանը չի մերժել Բելգրադում հանդիպում անցկացնելու գաղափարը, բայց հայտարարել է, որ դա հնարավոր կդառնա միայն հանրաքվեի անցկացումից հետո:

Սնարք

Գազի մուտքը դադարեցված է երկու շաբաթով. Ինչպես հայտնել էինք, Կենտրոնական Վրաստանում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով Փասանաուրի ավանի մոտ շարից դուրս է եկել Մազդոկ-Վլադիկավկազ-Սազուրամո 1200 մմ-անոց տրամագծով նոր գազամուղը: «Վրացգազ» դեպարտամենտի վերանորոգման բրիգադի ուժերով գազի ստացումը տեղափոխվել էր 700 մմ-անոց գազամուղ, որի թողունակությունը 15 մլն խմ-ով պակաս էր: Մայիսի 13-ին ուժեղ ջրահոսից շարից դուրս է եկել նաեւ այդ պահեստային գազամուղը: «Վրացգազ» դեպարտամենտի նախագահ Կարլո Նիկոլաիշվիլու ասելով, մոտավորապես երկու շաբաթ է պետք այդ աշխատանքների ավարտի համար: Իսկ Վրաստանն առայժմ գազ կստանա Ադրբեջանից, որը ՌՖ-ի հաղորդման համաձայն, արգելել է այն փոխանցել Հայաստան:

digitised by A.R.A.R.@

Մամուլ

Դանդաղաշարժ խորհրդարան

Վարչվեցին ՀՀ Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանի եւ «տխուր» ավանդույթի համաձայն, օրակարգ մտած հարցերի գերակշիռ մասն այդպես էլ չքննարկվեց: Փաստորեն անհրամաբանական մի օրինաչափությամբ ամիսներ շարունակ նիստից նիստ են տեղափոխվում «Մասսային տեղեկատվության», «Ավելացված արժեքի հարկի», «Պետական ոստիկանության», «Ռադիոյի եւ հեռուստատեսության» եւ շատ այլ օրենքների նախագծերը:

Կարծում ենք, վաղուց հասունացած հարց է դարձել, որ կամ խորհրդարանը պետք է մեծացնի իր օգգ-ն կամ լիազոր նիստերին ավելի շատ օրեր տրամադրի: Ինչեւէ: Պատգամավորները երկին միմյանցից բաժանվեցին առանց որեւէ որոշում կայացնելու: Նախ մերժվեց ՀՀ Գիս նախագահության կողմից ԱՊՀ միջխորհրդարանական, Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական եւ ԵԱՀԽ վեհաժողովներում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների կազմերի ընտրության առաջարկվող նախագիծը: Բանն այն է, որ փաստաթղթի հիմքում տեղերն ըստ խմբակցությունների բաժանման սկզբունքն էր դրված: Դա դիտվեցավ որպես բարձրացրեց անկուսակցական պատգամավորների շրջանում նրանց կարծիքով, իրենք պարզապես խտրականության զոհ են դառնում: Բացի այդ, իրեն հասկացված տեղերից դժգոհ էր նաեւ ՀՅԴ խմբակցությունը... Եւ ամենից էլ զարմանալի չի լինի, եթե մայիսի վերջին եւ հունիսի կեսերին նշված վեհաժողովներից երկուսի աշխատանքներին, ձեւավորված չլինելու պատճառով, Հայաստանի պատվիրակությունները չկարողանան մասնակցել:

Հաջորդ հարցը, որը նույնպես տեղատույսի մեջ ընկավ, ՀՀ Գերագույն խորհրդին ստորեր վերահսկիչ պալատի ստեղծումն էր: Մի մարմին, որը պետք է իրականացնի հանրապետությունում ֆինանսաբյուջետային վերահսկողությունը: Փաստորեն գործադիր իշխանությունների անվերահսկելի գործունեության երանելի ժամանակներին դրանով վերջ էր դրվելու: Եւ հավանաբար այդ պատճառով էր, որ խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցությունները եւ պատգամավորական խմբերը կողմ էին նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունելուն, իսկ ՀՀՇ-ն դեմ էր:

Փոխադարձ համաձայնությամբ հարցի քննարկումն ընդհատվեց, բայց ամենայն հավանականությամբ իշխող հասարակական-քաղաքական կազմակերպությունը հետեւությամբ տեղի չի տա:

Հ. Պ.

Մամուլ

Հերթական սադրանք

Մայիսի 13-ին Իմադրես գործակալությունը հաղորդեց, թե Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը պատարագ է մատուցել հայկական զորքերի կողմից գրավված Քելբաջարի շրջանում: Ադրբեջանի աղբյուրները պնդում են, որ դրանով իսկ նա «խաչ քաշեց» բոլոր համաձայնագրերի վրա, որոնք կնքվել էին Կովկասի մուսուլմանների հոգեւոր վարչության ղեկավարի հետ մարտին, Ժենեւում կայացած հանդիպման ժամանակ: Սանձելով այդ լուրը, մենք կարդեցինք Հայաստանի կրոնի հարցերով պետխորհրդի նախագահ Լյուդվիգ Խաչատրյանի հետ, որը հերքեց Իմադրեսի հաղորդագրությունը, այն անվանելով այն «կրոնից սադրանք»: Նա հայտարարեց, որ նման պատարագը կդիտվեր որպես քաղաքական գործողություն, իսկ «հայկական եկեղեցին չի միջամտել եւ չի միջամտում քաղաքականությանը»:

«Ազգ»

Սոցիալական

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Ըստ վերջերս պատշգամբոնս գործունեության մեջ մտած Հայաստանի Հանրապետության 1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, մենք այս տարի ընդհանուր առմամբ, ավելի լավ ենք աղրելու, քան 1992 թ.:

Եթե մի պահ վերանանք բազմաթիվ անակնկալներով լի մեր ժամանակներից, ապա կառավարության կողմից նման խնդրադրումն իսկ դրվատանքի է արժանի: Մանավանդ, որ «հանրապետության ժողովրդագրական իրադրության վրա վերջին տարիներին մեծ ազդեցություն է գործում արտագաղթը, որը հիմնականում դայմանավորված է Հայաստանում եւ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական եւ քաղաքական խորը ցնցումներով»: Կանխատեսումների համաձայն, «հանրապետության բնակչության թվաքանակը մինչեւ 1994 թ. հունվարի 1-ը կկազմի 3 միլիոն 776 հազար մարդ 1993 թ. նույն ժամանակահատվածի 3 միլիոն 729 հազար մարդու դիմաց»:

Երկու մեջբերումներն էլ առնված են վիտոհիբյալ ծրագրից, եւ պետք է խոստովանել, ոչ միանգամայն տպավորություն են թողնում: Առաջին արձագանքը ոգեւորությունն է. անկախ ամեն ինչից մահացության աճ, ծնունդների նվազում, զանգվածային արտագաղթ,- հանրապետության բնակչության թիվն ավելանում է մոտ 50 հազարով:

Սակայն կարելի՞ է այս թիվը բնական համարել: Անշուշտ ոչ: Կառավարությունն էլ է դա ընդունում, բայց «մեղքը» հիմնականում սոցիալ-տնտեսական եւ քաղաքական խորը ցնցումների վրա է գցում: Եւ վերջ՝ այսքանով էլ ավարտվում է հանրապետության ղեկավար այրերի վերաբերմունքն այս հիմնարար խնդրին:

Սոցիալական քաղաքականության անկյունքարը բնակչության առավել անշարժատան խավերի սոցիալական պաշտպանվածության ապահովումը համարելով, գործադիր բարձրագույն իշխանությունը, ըստ էության, հասկացնում է, որ երեխաների ծննդի ավելացման հարցում ինքն առայժմ շահագրգռված չէ: Ասենք, ինչ-որ տեղ դա հասկանալի է՝ աշխատունակ բնակչության թվաքանակի ավելացմանը զուգընթաց արագորեն պակասում են աշխատատեղերը:

Եւ այնուամենայնիվ, մի՞թե տնտեսական դժվարությունները ժողովրդագրական քաղաքականությունն ընդհանրապես անտեսելու մեղմացնող հանգամանք պետք է համարել: Ննդի խթանմանն ուղղված պետական հայտնի միջոցառումների մասին նորապսակներին արտոնյալ պայմաններով բնակարանի եւ վարկերի հատկացում, հեռծննդյան եւ նախաուծննդյան վճարների արձակուրդների ավելացում, երեխաների համար տվող նոյաստների կտրուկ բարձրացում եւ այլն, խոսելն այսօր բերես լուրջ չի լինի: Սակայն դա նշանակո՞ւմ է, թե ընդհանրապես սպառված են բնակչության աճն անհրաժեշտ չափով կարգավորելու պետության բոլոր հնարավորությունները: Չէ որ տնտեսապես հզոր երկրներում էլ միայն դրամական շոշափելի ներդրումներն այս խնդրում էական արդյունք չեն տալիս:

Վաղուց ընտանիքներում երեխաների ծնունդը զուտ ֆինանսական եւ նյութական հիմնահարցից հոգեւոր պլոս է տեղափոխվել: Եւ բնակչության աճի վրա ազդելու այս բնագավառում հայտնի դժվարությունների կարգավորումն էլ շատ ավելի էժան է նստում, թեեւ նախաադաստատական հսկայական գործունեություն է պահանջվում: Բանն այն է, որ ամուսնությունը միայն երկուսի գործը համարելով, պետությունն իր վրա է վերցրել միայն այն պատշգամանացնելու պարտականությունը: Եւ դա էլ հիմնականում այն պատճառով, որպեսզի ընտանիքներում կոնֆլիկտներ ծագելու դեպքում միջամտելու իրավունք ունենա:

Նման վերաբերմունքի հիմնական արդյունքն այն է լինում, որ համեմատաբար բարձր քաղաքակրթության հասած երկրներում երիտասարդներ միայն երջանիկ լինելու նպատակադրումներով ընտանիք կազմելով, ըստ էության, անպատասխանատու բնկնելով իրենց համար նոր եւ բավականին խրթին փոխհարաբերությունների մեջ, հաճախ հակառակ վիճակում են հայտնվում: Իսկ պաշտոնական վիճակագրությունը տարեց-տարի ամուսնալուծությունների աճի եւ ծնվող երեխաների թվի պակասի մասին տագնապալից հաղորդագրություններ տալու փաստի առջեւ է կանգնում:

Քաղաքակրթության մյուս վնասը «տարիքն առած» ամուրիներն են:

Հանրապետությունում ի՞նչ է արվում այս հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ: Գործնականում ոչինչ: Անգամ վերջին տարիներին մեծ պայքարի գնով դպրոցական ծրագիր մտած «Ընտանեկան կյանքի բարոյագիտություն եւ հոգեբանություն» առարկան դուրս է մղվել:

Ամուսնական զույգերի ընտրությունը դյուրացնելու կոչված մի քանի հաստատություններն էլ հիմնականում անձեռնհաս գործունեության պատճառով շատ շուտով սպիտված եղան լուծարվել:

Նման վիճակի արդյունք պետք է համարել, որ վերջին ժամանակներս ավելի ուժգին է հնչում արտոնեներն արգելելու եւ բազմակնություն թույլատրելու կողմնակիցների ձայնը, որոնք իրենց դատանջները ժողովրդի թվաքանակը մեծացնելու մտահոգությամբ են բացատրում: Այնինչ, իշխանությունները, եթե նրանք խորհ միայն օրվա խնդիրներով չեն առաջնորդվում, անհապաղ ընտանիքների ամրապնդմանը եւ նոյաստավոր ժողովրդագրական քաղաքականություն վարելուն ուղղված քայլեր պետք է ձեռնարկեն: Իսկ դրանցում առաջնահերթը անհրաժեշտ կառույցների եւ համապատասխան կադրերի ստեղծումն է: Միայն դրանց առկայության դեպքում է հնարավոր այնպես անել, որ զգալորում գրանցված զույգերը դատարանի կողմը նայելու առիթներ քիչ ունենան:

Հայաստանի Հանրապետության 1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը նշանավոր է նրանով, որ ներկա իշխանությունները վերջապես կանգնեցին դեղի տուկայական հարաբերություններ կարգավորվող անցման դիրքերում: Այս հանգամանքը մեզ հույս է ներշնչում, որ հետո չէ այն օրը, երբ պետությունն ընտանիքների հարցում ևս կարգավորման քաղաքականություն կդեղերի:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ-իտալական «ԻՄԱԿ» ֆիրման առաջարկում է



Բեռների տեղափոխություններ ԻԼ-76 ինքնաթիռով Երեւան-Սավրոպոլ: Ըստ պատվերների ձեր բեռները կտեղափոխենք ԱՊՀ ցանկացած վայր: Ուղեվարձի գինը 1 կգ բեռի համար մինչեւ 80 ռ. է: Վճարման ձեւը՝ ցանկացած:

Ապահովում է.

Պահեստավորման եւ պահակային ծառայություններ Սավրոպոլում եւ բեռների տեղափոխում Սավրոպոլից ԱՊՀ ցանկացած վայր ավտոտրանսպորտով, ընդունված գներից 30 տոկոսով էժան:
Ուեւորների համար հետեւյալ ուղերթները ինքնաթիռներով.

Երեւան-Վոլգոգրադ-Երեւան
Երեւան-Սավրոպոլ-Երեւան
Երեւան-Աստրախան-Երեւան

Կազմակերպում է.

Նախնական պատվերներով ուղեւորների եւ բեռների տեղափոխում ինքնաթիռով ԱՊՀ ցանկացած երկիր եւ երկրաշեղ համագործակցության հիման վրա՝ արտասահման:

Իրացնում է.

Սենդամբերք, ինչպես նաեւ ընդունում է նախնական պատվերներ սենդամբերքի ձեռք բերման եւ Հայաստանն տեղափոխման համար մեկ շաբաթվա ընթացքում:

Հասցեն. Երեւան 375009 Հեռ. 52. 97. 40
Իսահակյան 28, 3-րդ հարկ 52. 99. 83

Մեկնաբանություն

Քվորումը ներում է քաղխորհրդին

Երեկ Երեւանի քաղխորհրդի նստաշրջանը շարունակեց իր անցյալշաբաթվանից կիսատ մնացած աշխատանքները: Շարունակել կարելի է ասել միայն ձեւի համար, որովհետեւ անցած շաբաթ նստաշրջանի աշխատանքները քվորում չլինելու պատճառով հազիվհազ տեւել էին մինչեւ կեսօր, եւ երեկ եւս քաղխորհրդի նիստին ներկա պատգամավորներն իրենց փոքրաթիվ խմբով հետաքրքիր ջանքերով կարողացան նիստը երկարաձգել մինչեւ մոտ ժամը 16.30, այդ ընթացքում իրենց աշխատանքների ծրագրերն ի կատար ածելով հանձնաժողովների հաշվետվությամբ ու որոշ ելույթներով: Իսկ ժամանակի հիմնական մասն անշուշտ ծախսվեց գրանցում կատարելու, ընդմիջում հայտարարելու եւ պատգամավորներին նիստի հրավիրելու վրա:

Վերջին նիստերից կարելի է եզրակացնել, որ երբաղխորհրդի շատ պատգամավորներ «վիզ դրած» ուզում են հաստատել, որ իրենք են հնարել «անունը կա, ամանում չկա» խոսքը:

Իսկ այսօր ժ. 11.00-ին Երբաղխորհրդի նախագահ Վահագն Խաչատրյանը որոշել է «դիտողեչերակալը» անցկացնել նիստերի դահլիճում: Կժամանե՞ն արդյոք, պատգամավոր բարեկամներ, ձեր մանդատին «դուրքան»:

Գ. Ն.

Զրույց

Էդիբար Մամեդով. «ԱԺՄ-ն դրամ է շորթում բոլոր գործարար մարդկանցից»

Ադրբեջանի գործարար շրջանակների եւ ընդդիմության կարծիքով, ԱԺՄ-ն, իշխանության գալով, տուկայական տնտեսության, սեփականաշնորհման եւ հողային բարեփոխման համար հիմքեր չստեղծեց: ԱԺՄ-ի վարած քաղաքականությունը խախտել է նոր կազմավորվող բիզնես դասակարգի հավատն իր նկատմամբ: Այսպես, հանձնայն էդիբար Մամեդովի խոսքերի, պետությունը ոչինչ չի անում սեփականության գաղափարների եւ դրա անձեռնմխելիության երաշխիքների հաստատման արագացման համար, նույնիսկ հակառակը, գալով իշխանության, ԱԺՄ-ն սկսեց դրամ շորթել բոլոր գործարար մարդկանցից: Ադրբեջանի ՆԳՆ այս ճանապարհով կորզել է 1.2 մլրդ ռուբլի: Սա հանգեցրեց Ադրբեջանից կապիտալի արտահանմանը: Գործարար մարդիկ իրենց փողերը ներդնում են ռուսաստանյան բանկերի հաշիվներում: Ադրբեջանական իշխանությունները իրենց են վերցնում բոլոր տարադրամային մուտքերի 60 տոկոսը եւ փոխանակում դրանք դոլլարի դիմաց 50 ռուբլի կուրսով: Գործարար շրջանակները հաստատում են, որ Ադրբեջանի Կենտրոնական բանկից փոխանակություններ ստանալու համար իրենք ստիպված են միլիոնների հասնող կաշառքներ տալ: Էդիբար Մամեդովն ասում է, որ ԱԺՄ-ն հափշտակել է իշխանությունը եւ չգիտի ինչ անել դրա հետ: Սակայն ամենից ուժգին ընդդիմությունն անհանգստացած է էլչիբեյի տարածվող ավտորիտարիզմից:

ՆՏ

Ադրբեջանը մեծ կարեւորություն է տալիս ԱՄՆ-ի հետ համագործակցությանը

Ադրբեջանի արտաքին գործերի խոսնակը հայտարարեց, որ խորհրդարանի նախագահի այցելությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներ նոր էջ է բացել երկու երկրների հարաբերությունների մեջ: Խորհրդարանի նախագահը Ամերիկայի ղեկավարների հետ հանդիպման ժամանակ ընդգծել է, որ առանց ԱՄՆ-ի հետ համագործակցության Ադրբեջանը ոչ մի արդյունքի չի հասել: Խոսնակը նշել է, որ Ադրբեջանի պատվիրակության ընդունելությունն այդ երկրի ղեկավարների կողմից փաստ է եւ դա նշանակում է, որ հատուկ ուշադրություն է դարձվում Ադրբեջանին:

ՆՏ

Տարերային աղետ Ղուբաթլիում

Շընդհատվող անձրեւների հետեւանքով Ադրբեջանի Ղուբաթլիի շրջանում տեղի ունեցավ վերջին տասնամյակներում ամենաուժեղ տարերային աղետը: Ափերից դուրս եկած գետը ջրել է տարել է երկու գյուղերի ավելի քան 3 հազար հեկտար ցանքեր: Չորի տակ են մնացել տասնյակ բնակելի շենքեր:

Ոսկին բանկանում է

Ադրբեջանում 27 տոկոս բարձրացել է ոսկու, 37 տոկոս արծաթի եւ 24 տոկոս արծաթի գինը: Ինչպես նշում են հանրապետության «Յուվելիրոչկա» արտադրական միավորման փորձագետները, դա գլխավորապես պայմանավորված է Ռուսաստանից սպասվող բանկարժեք մետաղների հերթական բանկացումով: Այսօր Ադրբեջանը ստիպված է ռուբլիով վճարել ներմուծվող ապրանքների համար, սակայն հաշվի առնելով դոլլարի փոփոխվող կուրսը: Իսկ ոսկու մատակարարումները կազմում են կնքված պայմանագրերի մոտ 18 տոկոսը:

Սնարի

Պետական տուրք 2 հազար դոլլարի չափով

Ինչպես հաղորդեց Ադրբեջանի Նախարարների կաբինետի մամուլի կենտրոնը, վկայակոչելով կառավարության ղեկավարի հրամանագիրը, այսուհետեւ օտարերկրյա ֆիրմաները եւ կազմակերպությունները պետք է վճարեն 2 հազար դոլլարի պետական տուրք, եթե նրանք ներկայացուցչություն են բացում հանրապետությունում կամ երկարացնում նրա գործունեության ժամկետը:

Սնարի

digitised by A.R.A.R.@

Զրույց

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱ՞Ն ԻՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

Անշուշտ, դրա համար էլ չեմ լքում Հայաստանը

- Ինչո՞վ է զբաղվում ձեր ղալաթը:

- Ողջ աշխարհում առեւտրաարդյունաբերական ղալաթները բիզնեսմեննների ակումբներ են, որոնք միջնորդի դեր են խաղում ռեսուրսների եւ մասնավոր ձեռնարկատիրական ոլորտի միջեւ, նպաստելով ազգային տնտեսության զարգացմանը:

- Իսկ մե՞զ մոտ:

- Մեզ մոտ բացակայում է նույնիսկ օրենսդրական հիմքը, այսինքն, չկա օրենք առեւտրաարդյունաբերական ղալաթի մասին: Մենք ներկայացրել ենք մեր առաջարկությունները կառավարությանը, եւ այժմ դրանք քննարկվում են:

- Համենայն դեպս:

- Շուկաներ ենք որոնում Հայաստանի արտադրողների համար: Մենք առաջինն էինք, որ հարաբերություններ հաստատեցինք Իրանի եւ Թուրքիայի հետ: Այժմ դուրս ենք գալիս արեւմտաեվրոպական շուկա: Առավել մեծ հույսեր ենք կապում Արեւելյան Եվրոպայի հետ:

- Հայաստանում արտադրված ո՞ր ապրանքներն են պահանջարկ վայելում:

- Թեթեւ արդյունաբերության եւ մեքենաշինության արտադրանքը: Կոշիկ, տրիկոտաժ: Ու միտքը: Այսինքն, գիտությունը:

- Ի՞նչ գումարներով եք գոյատեւում:

- Կառավարությունը մեզ չի ֆինանսավորում: Հիմնականում անդամավճարներով: Ղալաթին անդամակցում են 360-ից ավելի ձեռնարկություններ: Ներգրավում ենք եւ մասնավոր ոլորտը:

- Անդամավճարի չա՞փը:

- 50 հազարից մինչեւ 100 հազար: Տարեկան:

- Եթե հաջողվում է ղալաթաբիր կնքել, ասենք, Ֆրանսիացիների հետ, ստանո՞ւմ եք միջնորդի տոկոսը:

- Եթե ղալաթագրում ներգրավված է մեր անդամներից որեւէ մեկը՝ ոչ:

- Էլ ինչո՞վ եք զբաղվում:

- Բորս-մաժորային վկայականներ ձեւակերպելով. գրագետ խորհրդատվությամբ արտասահմանյան շուկաների, հնարավոր գործընկերների վերաբերյալ, ծանոթացնում ենք արտասահմանյան ֆիրմաների ներկայացուցիչներին մեր շուկայի հետ:

- Այդ ամենի համար անհրաժեշտ են բարձրորակ մասնագետներ:

- Մեր մասնագետները հենց այդպիսին են:

- Իսկ ինչպե՞ս, ո՞ւմ միջոցով եք դուք ստանում կամ ուղարկում առաջարկը:

- Հայաստանի առեւտրաարդյունաբերական ղալաթը անդամակցում է Միջազգային առեւտրի ղալաթին: 1989 թվականից մենք ստանում ենք Փարիզից ողջ տեղեկատվությունը: Ունենք անմիջական կապեր տարբեր երկրների նույնատիպ կազմակերպությունների հետ:

- Ո՞ր դրական փաստը կհետեւիք ձեր աշխատակիցների մեջ, ասենք, երկու վերջին տարում:

- Հիսունից ավելի համատեղ ձեռնարկություններ ստեղծված մեր միջնորդությամբ:

- Որոնք այսօր չեն աշխատում:

- Դա արդեն հարցի քաղաքական կողմն է: Շրջափակումներ, պատերազմ...

- Հայաստանում կա՞ն իրական հիմքեր իսկական բիզնեսի համար:

- Իհարկե: Մենք ունենք ձեռնարկություններ եւ ամբողջ արտադրական ճյուղեր, որոնք շատերին են հետաքրքրում: Կայուն իրավիճակի եւ խելոք տնտեսական քաղաքականության դեպքում Հայաստանն անտարակույս ոտքի կկանգնի: Միայն անհրաժեշտ է վերանայել կապերը եւ ստեղծել նորերը:

- Մի խոսքով, լավատե՞ս եք:

- Անշուշտ: Այդ պատճառով էլ չեմ լքում Հայաստանը, թեեւ շատերն են գնում եւ թեեւ ունեմ բոլոր հնարավորությունները:

Սուրճը խմվեց: Խոսակցությունը դեռ շարունակվում էր: Բիզնես, հայ, իրավիճակ, աղագա: Հույս ունենանք, վերջն իրոք լավ կլինի:

ԱՐԱՄ ՅԱՎՐԱՍՅԱՆ

Դուք ուզո՞ւմ եք հանգստանալ

Ծանր ձմռանից, առօրյա հոգսերից հոգնած եւ առողջությունը կորցրած հանրապետության բնակչությունը տաք օրերի գալու հետ հավանաբար հանգստանալու եւ առողջությունը վերականգնելու տրամադրություն ունի: Սակայն...

«Ազգը» արդեն անդրադարձել է հանրապետության առողջարանների եւ հանգստյան տների «կծող» գներին, բայց պարզվեց, որ դրանք ամենեին էլ վերջնական չեն եւ արդեն դարձել են 25-26 հազար՝ 18 օրվա եւ 15-16 հազար՝ 12 օրվա համար:

Ինչպես նշեցին Հայկուրորտխորհրդում եւ ՀՀ սոցիալական ապահովության ֆոնդում, ուղեգրերի արժեքների կայունացում, գոնե այս տարի... չի նախատեսվում:

Իսկ նրանք, ովքեր իրենց արձակուրդը հանրապետությունից դուրս անցկացնելու ցանկություն կունենան, նախկին ԽՍՀՄ առողջարանների ուղեգիր ձեռք բերելու համար թող նախապատրաստեն 70-150 հազար ռուբլի...

Անշուշտ, կան նաեւ որոշակի հուսադրող փաստեր՝ սոցապ ֆոնդի գործադիր տնօրեն Անդրանիկ Ասատրյանն ասաց, որ թեեւ իրենց տվող մասհանումները կրճատվել են, բայց գեղչով ուղեգիր ձեռք բերելու համար կազմակերպությունն այս տարի ես ֆինանսական միջոցներ է տրամադրելու՝ 68 մլն. ռուբլի: Ըստ էության, դրանից օգտվելու հնարավորություն ունեցողների թիվը խիստ սահմանափակ է լինելու՝ ընդամենը 6-7 հազար մարդ: Ասենք, արժեքի 15 տոկոսի մուծումն էլ շատերի համար գոցն անհնարին լինի՝ ներկա գներով այն կազմում է 3750 ռուբլի, այսինքն, նվազագույն աշխատավարձը եւ կենսաթոշակը զգալի գերազանցող գումար:

Այնպես որ, եթե ուզում եք հանգստանալ, սեփական բնակարանում մնալուց հարմար եւ ավելի էժան տարբերակ չեք գտնի: Հ. Պ.

Հայաստանի առողջապահության ազգային ինստիտուտը

կազմակերպում է դասախոսություններ, նվիրված առողջապահական գործունեության եւ բժշկագիտության հիմնական ուղղություններին: Դասախոսություններն ուղղված են առողջապահության բարեփոխումների եւ զարգացման ուղիների լուսաբանմանը, միջազգային փորձի վերլուծմանը եւ կիրառման հնարավորություններին, բժշկության նոր եւ ինտեգրալ բնույթի հարցերին:

Լինի կիսամյակում նախատեսված է անցկացնել հետեւյալ դասախոսությունները.

25 մայիսի. Առողջապահության բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում:
. Բարեփոխումները կադրային, կրթական եւ գիտատեխնոլոգիական բնագավառներում:
Դասախոս՝ բժշկ. գիտ. դոկտոր Հ. Ա. Նիկողոսյան
8 հունիսի. Ընտանեկան բժշկի ծառայության կազմակերպումը:
Դասախոս՝ պրոֆ. Օ. Ա. Մուսաֆյան
22 հունիսի. Հասարակական առողջության հասկացողի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում:
Դասախոս՝ բժշկ. գիտ. թեկ. Վ. Ա. Դավիդյանց
6 հուլիսի. Առողջապահության բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում:
. Բարեփոխումները բուժօգնության կազմակերպման եւ հիվանդությունների կանխարգելման համակարգերում:
Դասախոս՝ բժշկ. գիտ. դոկտ. Հ. Ա. Նիկողոսյան
Դասախոսությունների սկիզբը ժ. 15:00 ՀԱԱ-ի մեծ լսարանում (Կոմիտասի փ. 49/4)

Մուտքն ազատ է:
Առաջիկայում պատրաստվող դասախոսությունների ցուցակները պարբերաբար կհրապարակվեն:

ՀԱԱ-ի տնօրենների խորհուրդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հատուկ դասընթացների բաժին. կարճ դասախոսություններ

1. Բանակցությունների սկզբունքները տնտեսական հարաբերություններում

Մայիսի 22, 26, 28, 29, 31 1993 թ.
Առաջ Ա. ժ. 10:00-13:30
Առաջ Բ. ժ. 15:00-18:30
Դասախոսներ. Դեբորահ Վեյշ, Ջոան Սմիթ

2. Դրամային եւ բանկային խնդիրներ

Մայիսի 31 - հունիսի 11, 1993 թ.
Յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 18:00-21:00,
Դասախոս Վարդգես Բուսալյան

3. Ստրատեգիական պլանավորում (միայն գրադարանավարների համար)

Մայիսի 24 - հունիսի 8, 1993 թ.
Մայիսի 24, երկուշաբթի, ժ. 10:00-12:00,
Մայիսի 25-27, ժ. 9:00-12:00
Մայիսի 31, երկուշաբթի, ժ. 9:00-12:00
Հունիսի 1-4: Գործնական հանձնարարություններ
Հունիսի 7: Ընդհանուր ծրագրի վերանայում
Դասախոս. Միլվա Մանուկյան, Արաքսի Յուրուկյան

Դասախոսությունները կընթանան անգլերեն լեզվով, հայերեն հանրնթաց թարգմանությամբ: Յուրաքանչյուր դասընթացի գրանցման արժեքը 200 ռուբլի: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 27-33-70 հեռախոսահամարով:

Պետծառայողները իրենց ունեցվածքի մասին պետք է հայտնեն

Հայաստանի պետական հիմնարկություններում սկսվել է պետական ծառայողների ունեցվածքի մասին դեկլարացիաների հավաքման արշավը: Դեկլարացիայում ծառայողը պարտավոր է նշել իրեն կամ իր ընտանիքին պատկանող անշարժ եւ խոշոր, շարժական ունեցվածքը, բանկարժեք իրերը, ինչպես նաեւ արժեթղթերը (եթե դրանց արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձը 60 անգամ) եւ դրամական գումարները, որոնք գերազանցում են նվազագույն աշխատավարձը 120 անգամ: Հայաստանում պետական ծառայության մասին օրենք չկա. տվյալ ակցիան իրականացվում է համաձայն անցյալ տարվա վերջին կառավարության կողմից ընդունված որոշման:

ՆՏ

Հայաստանի Ամերիկյան համալսարան

Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) կազմակերպում է դասընթաց «Միջազգային տնտեսական հարաբերություններ» թեմայով:

Դասախոսությունները կանցկացվեն մայիսի 18-ից հունիսի 8-ը, 1993, երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, երեկոյան ժամը 6.00-9.00:

Դասախոսությունները կընթանան անգլերեն լեզվով, միաժամանակյա թարգմանությունն ապահովվում է:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել Հայաստանի Ամերիկյան համալսարան 27.33.70 հեռախոսահամարով:

Երեւույթ

Դավիթաշենում դեռ ձմեռ է

Այլ կերպ չես մտածի երեւանի այս արվարձանում տիրող այսօրվա վիճակի մասին, եթե դատելու լինես էներգամատակարարման նույն երկժամյա ռեժիմից եւ շաբաթն ընդամենը մեկ անգամ, այն էլ մի քանի ժամով տվող ջրի քանակությունից: Ցանր ու մղձավանջի նմանվող այս ձմեռը մի կերպ հանած մարդիկ բնականաբար մտածում էին, թե գարնան գալով գոնե որոշ դրական տեղաշարժ կնկատվի լույսի ու ջրի մատակարարման հարցում, նվազագույնը գոնե կկրկնապատկվի տեւողությունը: Ա՛վ՝ դ, օրացուցային գարունը շուտով կավարտվի, իսկ Դավիթաշենում ձմեռային խիստ «ռեժիմը» դեռեւս ուժի մեջ է:

Ավելի ծիծաղելի է դառնում վերաբերմունքը քաղաքի այս ծայրամասում ապրող բնակիչների կարիքների հանդեպ: Նրանց «մեղքը» երեւի այն է, որ կենտրոնում չեն ապրում, որտեղ վերջին օրերին բարեբախտաբար կանոնավորվել են հիշյալ մատակարարումները, եւ օրս քաղամասերում օրվա մեծ մասը ե՛ւ լույս կա, ե՛ւ ջուր:

Մի վարկած էլ են առաջ քաշում դավիթաշենցիները. քաղաքային նոր իշխանությունները «վրեժ են լուծում» այս քաղամասից, քանի որ դեռ այստեղ են ապրում նախկին քաղաքապետի ծնողները: Թաղամասն այսօր շաբաթներով ջուր չլինելու պատճառով խեղդում է գարշահոտությամբ: Տրանսպորտի անբավարար աշխատանքի (իսկ երեկոյան ժամերին ընդհանրապես չաշխատելու) հետեւանքով ստիպված ես լինում դադարկել գրպանիդ պարունակությունը «փափախ» կոչվող երթուղային տաքսիների եւ ավտոբուսների ծառայություններից օգտվելու համար:

Խավարի ու ծարավի նկարագրված թագավորության մեջ միակ բանը, որ թերեւս մատնում է գարնան գալուստը, ծյան հաստ շերտի անհետանալն է փողոցներից եւ բակերից: Այդ «միջոցառմանը», որտեղ տեղյակ ենք, քաղաքային իշխանությունները չեն միջամտել, արեւն է իր ջերմությունից բաժին հանել ծայրամասում ապրող այս մարդկանց, ուստի եկեք արեւից ու բնությունից սովորենք եղածը հավասարապես բոլորին բաշխելու առդար սկզբունքը:

Դավիթաշենցիք դեռ համբերությամբ սպասում են: ԼԵՎՈՆ ԼԱՇԻԿՅԱՆ

Լուսանկարներ

ԱՄՆ-ը Հայաստանին հատկացրել է 106 հազար տոննա հացահատիկ

Երեւան, 13 մայիս. Սնարտ: ԱՄՆ գյուղատնտեսության վարչությունը Հայաստանին անհատույց կմատակարարի 106 հազար տոննա ֆուրաժային ցորեն: 31,3 մլն ամերիկյան դոլար ընդհանուր արժողությամբ այդ նվերը, որի արժեքի մեջ մտնում են նաեւ փոխադրական ծախսերը, Հայաստանի կառավարությանը կհատկացվի մասնավոր եւ պետական հատվածին ազատ գներով վաճառելու համար:

Ինչպես հաղորդում է Երեւանում ԱՄՆ-ի դեսպանությունը, վաճառից ստացվելիք դրամը պետք է հատկացվի գյուղատնտեսության մասնավոր հատվածի զարգացմանը եւ պարենային օգնության ու դեղորայքի ստացմանը:

Հացահատիկը Հայաստան կհասցվի մինչեւ ա.թ. սեպտեմբերի 30-ը:

Գրքեր

«Լոռէ» մանկական խումբը կմեկնի Ֆրանսիա

Վանաձորում երեկոյա հյուրախաղերով հանդես եկավ Ստեփանավանի քաղաքային մշակույթի բաժնի «Լոռէ» մանկական պարային խումբը: Հովհ. Աբեղյանի անվան ոլորտային դահլիճն այդ օրերին լի էր հանդիսականներով, որոնք ոգեւորությամբ ընդունեցին կատարողական զգալի վարպետության հասած խմբի համերգները: «Լոռէի» հաջող համերգը կկայանա Գյումրիում, այնուհետեւ հյուրախաղերի կմեկնի Ֆրանսիա Ստեփանավանի քույր քաղաք Դեսինի հրավերով:

Ս. Ս.

digitised by A.R.A.R.@

Էջ Գիր

Է. Հիլզենռաթ. ՀՐԵԱՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ ԽՈՐԱՍԱՆԿ ԵՆ, ԲԱՅՑ Ի ՎԵՐՋՈ ՏԱՆՈՒԼ ԵՆ ՏԱԼԻՍ

Գերմանիայում ծագումով հրեա էդգար Հիլզենռաթի վերջին գիրքը՝ «Վերջին մսի հեմիաթը» դասվում է «բեսսելլերների»՝ ամենալավ վաճառվող գրքերի շարքը, սացել է Ալֆրեդ Դյոբլին մրցանակ, որը երկրի ամենաբարձր գրական մրցանակն է, արդեն թարգմանված է շատ լեզուներով եւ շուտով կավարտվի նաեւ հայերեն թարգմանությունը: Վեպը նվիրված է հայ ժողովրդի դարասկզբի ողբերգությանը եւ հիշողությանը: Ստորեւ ներկայացնում ենք Ֆրանսիայում վերջերս հիմնադրված «Les Nouvelles d'Arménie» ամսագրի գլխավոր խմբագիր ՎԱԼԵՐԻԱ ԹՈՐԱՆՅԱՆԻ հարցազրույցը հեղինակի հետ:

– Հայաստանի հետ որեւէ կապ չունեցող գերմանացի հրեան ինչո՞ւ օրերից մի օր որոշեց իր անձնական ավանդը ներդնել օտար ժողովրդի ողբերգության մեջ:

– 70-ական թվականների սկզբներին ես արդեն երկու վեպ էի գրել հրեաների ոչնչացման մասին: Առաջինը՝ «Գիշերը», հիմնված էր Ուկրաինայում, հրեական գեստոյում իմ աղրած կյանքի հիշողությունների վրա, իսկ երկրորդը կոչվում էր «Նացիստը եւ սափրիչը»: Ես այլեւս ցանկություն չունեի գրել այդ թեմայով: Փոխարենը շատ զարմացա այն համաձայնած անգիտության կողակցությամբ, որ գոյություն ուներ հայերի ողբակիզման հարցում: Ես վճռեցի, որ պետք է ինչ-որ բան անեմ մոռացված եւ ֆշերին հայտնի այդ ցեղասպանությունը հայտնի դարձնելու համար: Ես կարդացել էի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան խռաստուն օրը» եւ մտածում էի, որ հարկավոր է վեպ գրել առավել արդիական ոճով ու լեզվով: Այն ժամանակ ես բնակվում էի Միացյալ Նահանգներում: Սկսեցի որոնումներ կատարել, բայց բոլոր փաստաթղթերը հիմնականում ղեկական էին: Դա չէր բավականացնի վեպ գրելու համար: Ես ամերիկացի հրատարակիչներին առաջարկեցի գրական սցենար, բայց նրանք պահանջում էին առավել իրական ղեկություն: 1975 թ. ես Գերմանիա վերադարձա այնտեղ հրատարակելու «Նացիստը եւ սափրիչը»: Հրատարակիչներից մեկն ուզում էր ինձ հետ ղեկանագիր ստորագրել չորս գրքի համար: Մեկ գիրք ղեկաս էր, եւ ես առաջարկեցի հայերի ցեղասպանությանը նվիրված վեպը: Բայց այդ հրատարակիչը սնանկացավ: Տարիներ անց կինոյի աշխարհ մուտք գործելուց հետո նա ցանկացավ ինձնից գնել իմ ապագա «հայկական» վեպի կինեմատոգրաֆիական բոլոր իրավունքները: Այդ ժամանակ մենք ղեկանավորվեցինք, որ նա կստանա կինոյի համար բոլոր իրավունքները, իսկ փոխարենը երկու տարի կֆինանսավորի գրքի խմբագրումը: Դա 1984 թվականին էր, եւ այդ ղեկից ես խոր լծվեցի աշխատանքի:

– Ձեր գիրքն առաջացնում է հայկական գիտերի առաջ կյանքի, սովորույթների, ծեսերի, նախնյաց ավանդույթների մանրամասնություններով: Կարելի է կարծել, թե անձամբ այնտեղ եք աղրել: Արդյոք հայերից վկայություններ ստացել եք: Աշխատանքի եւ վավերագրերի ի՞նչ աղբյուրներ եք ունեցել:

– Իմ աղբյուրները գրեթե բացառապես գրային են: Ազգագրական վավերագրերի հիմնական մասը հայթայթել եմ Սան Ֆրանցիսկոյի գրադարաններում Օսմանյան կայսրությունում հայերի ամենօրյա կյանքին նվիրված աշխատությունների, միսիոներների, ճանապարհորդների ղեկությունների, լրագրերի, ինքնակենսագրությունների մեջ եւ, իհարկե, ցեղասպանությանն առնչվող ղեկական ու դիվանագիտական զեկուցագրերի մեջ, որոնցից է Լեփսիուսի զեկուցագիրը: Ես մանկությանս մի մասն անցկացրել եմ Ռումինիայում եւ կարողացել եմ որոշ նմանություններ գտնել հայերի եւ Ռումինիայի հրեական փոքր համայնքների սովորույթների միջեւ:

– Հայերը հմայված են որոնես յուրայիններից մեկը ներկայանալու Ձեր հմտությունից:

–Ես հենց յուրային էի: Ես ցեղասպանության տարիների հայ էի գրքի խմբագրման ամբողջ ընթացքում:

– Գիրքը գրելով արեւելյան հեքիաթի ոճով, Դուք ոչ միայն վերարտադրում եք հայերի հիշողությունն ու ղեկությունը, այլեւ հիշեցնում այդ Արեւելքի բույրը, ոյերճանքն ու խորհրդավորությունը, որի ծնունդն են իրենք:

– Ինձ համար շատ կարեւոր էր գիրքը տեղավորել Արեւելքի շրջանակներում: Վերֆելը հերոս էր ընտրել արեւմտյան արժեքներով տոգորված եւ ֆրանսուհու հետ ամուսնացած հայի, ուստի նրա վեպի հենքն ավելի շատ «արեւմտյան» էր: Եվ հետո, հեքիաթը գրական այնպիսի ժանր է, որն ընդունում է չափազանցություններ, բայց տալիս ազատություններ: Գուցե դաժանությունն ուրիշ ձեւով նկարագրելը չափազանց սարսափելի լիներ:

– 1985 թ. Դուք Թուրքիա այցելեցիք գրքի ղեսրատման համար: Ինչպե՞ս անցավ Ձեր ճանապարհորդությունը:

– Ես այնտեղ մնացի վեց շաբաթ: Այցելեցի Վան, Էրզրում, Դիարբեքիր, Կարս: Այնտեղ դեռ հայեր կան, որոնք բաղցնում են իրենց ինքնությունը, բայց ես ճանաչեցի նրանց աչքերից: Ինձ աղշեցրեց Թուրքիայում հայկական հարցի բացարձակ ժխտումը: Ըստ ղաշտոնական վարկածի, Առաջին աշխարհամարտի ժամանակ եղել են հայերի եւ թուրքերի բախումներ, որոնց հետեւանքով երկու կողմերը կորուստներ են ունեցել: Երբ հարցնում եք, թե ով է կառուցել եկեղեցիները, ղատասխանում են. քրիստոնյաները, որոնք արտագաղթել են: Մեր խմբում գերմանացիներից մեկի մոտ կար «Շբեռն» հանդեսի համար, որտեղ ղատահաբար հայերին նվիրված հոդված էր զետեղված: Հանդեսը նրանից բռնագրավեցին: Ավելի ուշ Վանում ես հարցրի մեր ուղեկցողին, թե ինչ ավերակներ են երեւում միջնաբերդից: Ես գիտեի, որ խոսքը հին հայկական Վան քաղաքի մասին է: Նա ղատասխանեց, թե եկրաշարժ է եղել, որն ավերել է քաղաքի մի մասը: Երբ ես ցույց տվեցի նույն տեղում անվնաս մնացած երեք մզկիթները, նա ղատասխանեց, թե ալլահը ղաշտպանել է դրանք:

– Հրատարակումից հետո թուրքերն ինչպե՞ս ընդունեցին Ձեր գիրքը: Ձեր հրատարակիչը ճնշումների ենթարկվե՞ց արդյոք:

– Բնավ: Սակայն մենք սպասում էինք դրանց: Իմ բարեկամներից ոմանք նույնիսկ կանխագուշակել էին, թե ես կդառնամ մի նոր Սալման Ռուշդի: Բայց թուրքերն ավելի խելոք են դարձել: Նրանք հասկացան, որ իրենց միջամտությունը սոսկ կնոջասի գրքի գովազդին: Նրանք լռության մատնեցին գիրքը: Բեռլինում իմ ծանոթ թուրք մտավորականները նույն ձեւով արձագանքեցին: Ես գիտեմ, որ նրանք կարդացել են գիրքը, բայց այդ մասին երբեք ինձ հետ չեն խոսում:

– Քանի դեռ Թուրքիան չի խոստովանել իր ոճիրը, հայերը չեն կարողանա մոռանալ ցեղասպանությունը: Ի՞նչ կասեիք Ձեր իսկ բնութագրմամբ հայերի ողբակիզումը չճանաչելու փաստի մասին:

– Կարծում եմ, ցեղասպանությունը ցավոտ հարց է, որը կփոխանցվի սերնդե-սերունդ: Հայերի խնդիրն այն է, որ նրանք երբեք փոխհատուցում չեն ստացել: Բայց հնարավո՞ր է արդյոք վրեժ լուծել մեռած մարդասպանից: Հայերը տառապում են անարդարության խոր զգացումից: Այդ ցեղասպանությունն անդայման պետք է ճանաչվի:

– Դուք նացիստական հալածանքների զոհերից եք: Որտե՞ղ եք եղել Երկրորդ աշխարհամարտի ժամանակ եւ դրանից հետո:

– Ես ծնվել եմ Գերմանիայի Լայպցիգ քաղաքում: 1938 թ. Ռումինիա փախա գերմանացիներից ազատվելու համար: Բայց ռումինացիները եւս որոշել էին լուծել հրեական հարցը: Նրանք մեզ արտաքսեցին Ուկրաինա եւ տեղավորեցին գետոյում, որը շրջապատված էր բանակի կողմից: Սնվելու միակ միջոցը գիշերը ճամբարից դուրս գալն էր եւ շրջակա գյուղերում առեւտուր անելը: Ռուսները մեզ «ազատագրեցին» 1944 թ., եւ մենք ոտքով հետեւեցինք նրանց բանակին մինչեւ Բուխարեստ: Այնտեղից ես գնացի Սոֆիա: Հետագայում ռուսներն ուզում էին ձերբակալություններ անել եւ հազարավոր մարդկանց աքսորել Սիբիր: Ես փախուստի դիմեցի. գնացի Թուրքիա, այնտեղից երկաթուղով մեկնեցի Բաղդադ եւ ի վերջո հասա Պաղեստին: Ես ողջ մնացած եւ Պաղեստին հասած հրեաների առաջին խմբերի մեջ էի: Տարիներ անց Իսրայելից մեկնեցի Միացյալ Նահանգներ եւ վերջնականապես Բեռլինում հաստատվեցի 1975 թ.:

– «Վերջին մսի հեքիաթի» ակունքներում արդյոք հրեաների եւ հայերի տառապանքի ընդհանրությո՞ւնն է: Անձամբ ի՞նչ նպատակ եք ունեցել:

– Ես գրում եմ հիշողության մասին, ընդդեմ մոռացության: Հայերի ցեղասպանությունը տեղի ունեցավ ազգերի անտարբերության ղայմաններում: Հրեաներինը՝ նույնպես: Հիտլերի օրոք մեծ տերությունները փորձում էին արդարանալ, ասելով. «Մենք չգիտենք, թե ինչ է կատարվում»: Այսօր հարկավոր է դատապարտել այդ ոճիրները, որպեսզի ոչ ոք չփորձի բարնվել նման արտահայտությունների ետեւում: Ամեն ոք պետք է ղատասխան տա իր արարքների համար:

– Դժբախտաբար, այսօր Հայաստանում տեղի ունեցող դեպքերը հակառակն են ցույց տալիս: Միջազգային ընկերակցությունը տեղյակ է, բայց չի միջամտում: Արդյոք դա հուսախաբ չի՞ անում:

– Շրջափակված Հայաստանի ներկա իրավիճակը երկրորդ ցեղասպանություն է գրչի եւ սովի միջոցով: Իհարկե, դա սարսափելի է: Բայց ես գրելիս չեմ մտածում, թե աշխարհը բարելավվելու է:

– Երկու ազգերին էլ լավ ճանաչելով, կարո՞ղ եք ասել, որն է հրեայի եւ հայի տարբերությունը:

– Երկուսն էլ շատ խորամանկ են, բայց ի վերջո միշտ տանուլ են տալիս:

– Մի՞թե հրեաներն այսօր տանուլ են տվել Իսրայելի ղեսությունն ունենալով:

– Ողջակիզման հետեւանքով հրեաներն շատ բան կորցրին: Իսրայելի ղեսությունը հաղթանակ է, բայց ես վախենում եմ, որ այն ժամանակավոր լինի: Ես բավական հոռետես եմ: Երբ գրում էի «Վերջին մսի հեքիաթը», ես հրեա էի եւ հայ: Ես ինձ զգում էի տառապանքի դատապարտված: ■

TrueType & PostScript

Լրագրային տառաշեւեր

տեսակները՝ Times Helvetica Folio™

ընդամենը՝ 8 տառատեսակ

կիրառությունը՝ Macintosh IBM/WINDOWS

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

տառատեսակներ

Ի վերջո դրանք գեղեցիկ են

Մեջբերում

ԱՄՆ

Բույր հաղարեների փառատոն

Վաշինգտոնի մերձակա Ալեքսանդրիա քաղաքում ապրիլի 17-ին տեղի ունեցավ փառատոն՝ նվիրված Ալեքսանդրիա-Գյումրի քույր-քաղաք հռչակման երրորդ տարեդարձին: Քաղաքապետարանի հրապարակը զարդարված էր դրոշներով, ցուցատախտակներով, իսկ հատուկ տաղավարներում վաճառվում էին հայերեն գրքեր, ձայներիզներ, թերթեր եւ այլն: Բացումը, որին ներկա էին շուրջ 5 հազար հոգի, կատարեցին քաղաքապետուհի Պատրիսիա Թայսոնը եւ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Ռուբեն Շուգարյանը: Առաջինը դրվատանքով է խոսել երկրի տնտեսական եւ մշակութային զարգացման մեջ ամերիկահայերի բերած նպաստի մասին, իսկ Ռ. Շուգարյանը շնորհակալություն է հայտնել Հայաստանին եւ հատկապես Գյումրիին ցույց տրված բարոյական ու նյութական աջակցության համար: Երկու երկրներին հաջորդած գեղարվեստական ծրագրին մասնակցել են «Վասպուրական» պարախումբը եւ երգիչ Էդվին Ալբերյանը:

Հայ քաղաքապետը

Գլենդելի քաղաքային խորհուրդը քաղաքապետ է ընտրել Լեռի Զարյանին: Կալիֆորնիայի այս քաղաքի քաղաքապետը սովորաբար պաշտոնավարում է մեկ տարի՝ վերընտրվելու իրավունքով:

Հայկական պատվիրակների ժողովածու

«Նավասարդ» հրատարակչությունը լույս է ընծայել հայ դասական գրողների ստեղծագործությունների հատորյակը՝ «Հայկական պատվիրակներ» վերնագրով: Երկլեզվյա համակարգով ներկայացված են հայ արձակի 20 լավագույն վարպետների գործերը: Այն ներառում է Արփիարյան, Շիրվանզադե, Չոհրաբ, Նար-Դոս, Հակոբ Օշական եւ այլ գրողների՝ յուրաքանչյուրից մեկական գործ:

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Բոյաջիեւը ազգային հեռուստատեսության գլխավոր տնօրեն

Այս երկրի խորհրդարանի ձայների մեծամասնությամբ հայտնի ռեժիսոր Խայո Բոյաջիեւը նշանակվել է բուլղարական ազգային հեռուստատեսության գլխավոր տնօրեն: Մեր հայրենակիցն այս ասպարեզ մուտք է գործել տասնամյակներ առաջ: Հեղինակ է բազում բեմադրությունների եւ գեղարվեստական ֆիլմերի, նաեւ նախաձեռնող՝ տարբեր հաղորդաշարերի:

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսի Տեխնիկական համալսարանի որոշմամբ պրոֆեսորի կոչման է արժանացել հայ գիտնական Ժան Գալայճը: Վերջինս նախնական կրթությունը ստացել է Գարակյոզյան վարժարանում, ապա ավարտել Պոլսի համալսարանի բնագիտության բաժինը: Իբրեւ գիտական դասերի ուսուցիչ դասավանդել է Սահակյան եւ Կեդրոնական վարժարաններում, նաեւ ս. Խաչ Դպրավանքում: 1984 թ. ստացել է դոկտորի աստիճան: Ցարդ նա հեղինակ է 22 գիտական ուսումնասիրությունների, մասնակից՝ բազում միջազգային գիտաժողովների:

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության կամերային երգչախումբը Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ ապրիլի 14-18-ը մասնակցել է Մոթրեոյի երգչախմբի 29-րդ միջազգային մրցույթին: Այս առիթով տեղական «Լէսք Վոսուա» թերթը գովասանքի տողերով է անդրադառնում հայկական խմբի մասնակցությանը: Թերթի թղթակից Հելեն Թրյուզը գրում է. «Հայկական երկսեռ խումբն իր գրավիչ զգեստավորումով եւ յուրահատուկ ձայնային որակով անմոռանալի ոգի չմնա: Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ խումբը թավջային քաղցրությամբ ու մեղմաձայն բաժինների ծայրաստիճան արտակարգ տիրապետությամբ երգեց հինգ երգ»: Հայկական երգչախումբ արդարացրել է իրեն շռայլված այս դրվատանքը՝ արժանանալով «Mention excellent avec distination» մրցանակին:

Պատրաստեց ԼԵՎՈՆ ԼԱՇԻՆՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Դրամա

ԻՐԱՆ-ԹՈՒՐՔԻԱ. ՊԱՏԵՐԱԶՄ ԿՐՈՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Միջին Արևելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի երկրներում Արեւմուտքի եւ Արեւելքի կողմից թելադրված ժողովրդավարական մոդելները փորձարկվել են: Սակայն դրանք բոլորն էլ հանգեցրել են բռնաճնշումների ու ժողովրդի աղքատության: Ուստի այդ երկրներում իսլամական կողմնորոշումը բնական երեւույթ է: Այսօր Թուրքիայում եւս իսլամական կողմնորոշման կողմնակիցների թիվը գնալով աճում է: Թուրքիայի ղեկավարությունը սարսափահար միջոցներ է ձեռնարկում այդ միտումները կասեցնելու նպատակով: Այս դպրոցում նրանց ամենագոր զենքը հետևված դաս թուրքիզմի ազգայնական տրամադրությունների բորբոքումն է, որը խրախուսվում է Արեւմուտքի կողմից որոշակի նկատառումներով: Սա հանգեցնում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ առճակատման: Քանի որ Արեւմուտքի եւ Թուրքիայի կողմից Թեհրանը դիտարկվում է որպես իսլամ արմատականության միջնաբերդ, Իրանի եւ Թուրքիայի միջեւ գաղափարախոսական տարաձայնությունների ոլորտում չի կարելի անտեսել նաեւ Իրանի շիա լինելու հանգամանքը, որն ունի դատական արմատներ: Մեկ-երկու խոսք Իրանում շիայի տարածման դատության վերաբերյալ: 933-1055 թվականներին Իրանում իշխում էին դեյլամյանները կամ Ալեքսուե հարստությունը, որոնք, ըստ իրենց, սերվում էին Սասանյաններից: Նրանք դավանում էին իսլամի շիա ուղղությունը: Նրանց ջանքերով այդ ժամանակահատվածում շիան մեծ տարածում գտավ Իրանում: եւ հենց նրանց իշխանության ժամանակ հաստատվեց իմամ Հուսեյնի նահատակության օրվան (լուսնային տոմարի մոհառամ ամսի 9-10-ը) նվիրված սգո ծիսակատարության (շախսեվախսե) ավանդույթը: Դեյլամյանների օրոք Բաղդադի խալիֆայությունը եւս ենթարկվում էր նրանց, մինչ թուրք-սելջուկների արշավանքները, որոնք վերացրին եւ մեկին, եւ մյուսին:

Սաֆավիների հարստությունը Իրանում իշխել է 238 տարի (1499-1736 թթ): Այդ ժամանակաշրջանը կարելի է համարել Իրանի եւ Օսմանյան կայսրության միջեւ ամենաերկարատեւ բախումների շրջան, քանի որ տվյալ դարաշրջանում Իրանում իսլամի շիա եւ սունի ուղղությունների առկայությունը մեծապես խոչընդոտում էր ազգային եւ կրոնական միասնության հաստատմանը: Այդ էր պատճառը, որ Սաֆավիները, իրենք լինելով շիա, Իրանում կրոնական միասնականություն իրականացնելու նպատակով շիան հայտարարեցին Իրանի պաշտոնական կրոն: Եվ այսպիսով կրոնն ու քաղաքականությունը կենտրոնացան պետության ձեռքում: Տարածելով մոլեռանդ շիիզմն ընդդեմ օսմանյան թուրքերի ծավալապաշտական քաղաքականության, այն հզոր զենք դարձին, որով էլ պահպանեցին Իրանի անկախությունը (թուրք սուլթանները միաժամանակ կրում էին խալիֆի կոչումը: Խալիֆը բոլոր մուսուլմանների հոգեւոր առաջնորդն է համարվում): Եվ այսպիսով շիիզմը հիմնովին հաստատում գտավ Իրանում:

Մուհամեդ Արասին՝ Լոնդոնում հրատարակվող Իրանի ընդդիմության օրգան «Քեյհան» շաբաթաթերթի շրջանային հարցերի քաղաքական մեկնաբանը, թուրք-իրանական հարաբերություններին նվիրված «Իրան եւ Թուրքիա. պատերազմ կրոնական, գաղափարախոսական եւ թուրքական ծայրահեղ ազգայնականության միջեւ» խորագիրը կրող հոդվածում անդրադառնալով երկու երկրների միջեւ քաղաքական փոխհարաբերությունների սրմանը, մտահոգություն է հայտնում առ այն, որ թուրքերի, ինչպես նաեւ իրանցիների վաս քաղաքագետներ լինելու հանգամանքը մեծացնում է երկու երկրների միջեւ ռազմական բախումների հավանականությունը: Մեր կարծիքով, պարոն Արասին երկու երկրների փոխհարաբերությունները դիտում է մեկուսացված եւ գերագնահատում ներքին գործոնները: Այնինչ 21-րդ դարի շեմին, հին աշխարհակարգի կործանումից հետո, աշխարհի գերհզոր տերությունները ջերմեռանդորեն ջանում են նոր աշխարհակարգի սեփական մոդելները հաստատել մոլորակի գրեթե բոլոր վայրերում: Ստորեւ ձեզ ենք ներկայացնում հոդվածը որոշ կրճատումներով:

վարության հետ առճակատումից: Սակայն իրադարձությունների զարգացման ընթացքը վկայում է մոտ ապագայում տեղի ունենալիք փոփոխությունների մասին: Մյուս կողմից, Թուրքիայի ղեկավար շրջանակները, 70 տարի առաջնորդվելով քեմալիզմի հակաիսլամական ոգով, այսօր իշխանությունը վերածել են մի անգույն աշխարհիկ վարչակարգի, որը դատապարտելով իսլամի օրենքները, ջանում է գինաթափել իր իսլամական հակառակորդներին: 1992 թվականից Ղուրանի ուսուցումը դպրոցներում դարաշրջան դարձավ, Թուրքիան անդամակցեց Իսլամական համաժողովին: Թուրքական քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածը, ըստ որի աշխարհիկության դեմ քարոզչությունն արգելվում էր, տվել է եւ դրա փոխարեն կյանքի է կոչվել 198-րդ հոդվածը, որի համաձայն իսլամը վիրավորելու դեպքում 6 ամիս ազատազրկում է նախատեսվում: Իսլամի տարածման հարցում իր ազդեցությունն ունի նաեւ նավթի գործոնը: Սաուդյան դոլլարները թուրք անսկզբունք լրագրողների գրպանը լցվելով, նպաստում են փաթիթայության քարոզչությանը (սունի աղանդ, որը մեծ տարածում ունի իսլամական գաղափարախոսությունն է:

Օսմանյան սուլթանները շիա Իրանին դատանք էին համարում իրենց եւ սունի Միջին Ասիայի ու Աֆղանստանի միջեւ: Այսօր թուրք ազգայնականները Իրանը եւ Հայաստանը դիտում են որպես արգելք Թուրքիայի ու Միջին Ասիայի թուրքական աշխարհի միջեւ: Թուրքիան դեռեւս փայփայում է Իրանի Ադրբեջանին տիրանալու երազանքը: Թուրքերն այսօր են խոսում թուրքական աշխարհի նոր վերելքի մասին, թեպետ առերեւույթ դեմ են թուրքական ծայրահեղ ազգայնականությանը եւ դատաթուրքիզմին: Սակայն նրանք բոլորն էլ վերից վար այդ մոլուցքով են տառապում եւ միայն թուրքերի շաս փոքր տոկոսն է զերծ մնացել այդ վարակից: Թուրքիայի իշխանություններն իրենց Իրանի Իսլամական Հանրապետության դեմ կողմնորոշումը գործիք են դարձրել ԱՄՆ-ի, Իսրայելի եւ արաբների վրա ճնշում գործադրելու համար: Թուրքիան իր արեւելյան կողմնորոշման քաղաքականության համար հակակշիռ Իրանի դեմ դպրքարի ծախսերի հաստատում է դպահանջում Արեւմուտքից: Իրանի եւ Թուրքիայի ռազմական ընդհարումները քաղաքական եւ գաղափարակրոնական բնույթ են, դրի խորական շահողը, ինչպես Իրան-իրաքյան դատերազմում, Իսրայելն է: Մյուս կողմից էլ դատամական փուրը ցույց է տալիս, որ Թուրքիան Իրանի հետ փոխհարաբերություններում դատեհատաշաս է եղել: Վերջին հինգտարյա դատության ընթացքում, երբ Իրանը հզոր է եղել, Թուրքիան բարեկամական հավակնություններ է դրսեւորել, իսկ տկարության դեպքում՝ բռնություն եւ չկամություն: Օրինակ, Իրանի նավթի արտադրանքի դադարեցման դպրքարի ժամանակ Թուրքիան Անգլիայի կողքին կանգնելով Իրանին ամբաստանեց Անգլիայի իրավունքները ոտնահարելու մեջ: Իրան-իրաքյան դատերազմում թեեւ Թուրքիան ռազմական դեմ էր դրան, սակայն օգտվելով առիթից, իր ադրանքներն էր վանաառում հակամարտ կողմերին: Այսօր էլ թուրքերն իրենց ծայրահեղ ազգայնական նպատակներին հասնելու համար Իրանին հարվածելու ոչ մի առիթ բաց չեն թողնում, հատկապես Իրանի Ադրբեջանում ազդեցություն ձեռք բերելու հարցում:

Ըստ թուրքական տրոհ աղբյուրների, Թուրքիայի հանգուցյալ նախագահ Թուրգուտ Օզալը Վանի մոտ կառուցվող հակաբանական ռազմական բազայի հիմնադրման արարողության ժամանակ նշել է. «Շուտով ռազմական խոշոր խաղարձություններ են տեղի ունենալու շրջանում»:

Թուրքերն ասպարեզել են, որ կարող են լինել մեծ շահավաներ, համառ ռազմագետներ, բայց ոչ լավ քաղաքագետներ: Իսկ իրանցիները՝ մեծ իդեալիստներ, անկողմնակալ հեղափոխականներ, սակայն վատ դիվանագետներ: Նման առանձնահատկությունների առկայության դեպքում, իհարկե, ընդհանրությունները անտեսելը եւ հակասությունները բորբոքելը շատ դյուրին է, որը կարող է ողբերգական հետեւանքների հանգեցնել:

Շահ Աբասն ասել է. «Քրիստոնյաների կոշիկի դայտը գերադասում եմ օսմանյան ամենախոշոր դեմքերից»:

Իրանի կրոնազաղափարախոսության եւ Թուրքիայի ծայրահեղ ազգայնականության միջեւ դայքարը հնարավոր է այնպիսի ողբերգական հետեւանքներ ունենա, որ երջանի տանջված ազգերն ամերիկացի եւ եվրոդացի զինվորների երկարաճիտ կոշիկները գերադասեն իրենց դեկավարներից: Ասված չանի:

Պատրաստեց ԷՄՍ ԲԵԳԻՋԱՆՅԱՆԸ

Կարճ

Եկամուտը 95 միլիարդ դոլլար

Նավթ արտահանող արաբական երկրների կազմակերպության (ՆԱԱԵԿ) մեջ մտնող 11 դետությունները 1992 թ. նավթի վաճառքից ստացել են մոտ 95 միլիարդ դոլլար եկամուտ: Դա կազմում է այդ երկրների ամբողջ արտահանության արժեքի ավելի քան երեք քառորդը, որն անցած 12 ամսում ավելացել է գրեթե 7 տոկոսով: Այս տվյալները բերված են կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդելազիզ Ալ Թարաքիի զեկուցագրում, որը հրատարակվել է ե գիդական «Ալ Միրամ» թերթում: Ըստ կուցագրի տվյալների հաշվարկի, արաբական երկրներում նավթի հետախուզված դաշարները հասնում են 620 միլիարդ բարելի, որ կազմում է համաշխարհային դաշարների մոտ 60 տոկոսը, իսկ բնական գազի դաշարները հասնում են 28 տրիլիոն խորանարդ մետրի: Ինչպես գրում է «Ալ Միրամը», 1993 թ. սկզբներին ՆԱԱԵԿ-ի անդամների համախառն ազգային արտադրանքը կազմել է 400 միլիարդ դոլլար: Ըստ որում, դրա մեծաբաժին մասը կազմում է գրեթե 5 տոկոս, որը համաշխարհային ծավալով համարվում է շատ բարձր ցուցանիշ: Մինչդեռ կազմակերպության փարձագետները հաշվարկել են, որ առաջիկա տասնամյակներում համաշխարհային տնտեսությունն ավելի ու ավելի մեծ չափով կախված կլինի Մերձավոր Արեւելքի երկրների նավթից: Այսպես, արդեն 2010 թ. համաշխարհային տնտեսության մեջ օգտագործվելիք ամբողջ նավթի 50 տոկոսը կներմուծվի հենց այդ երկրից: եւ եթե 3 տարի առաջ մոտավորապես ամեն տարի տպադրվում էր 20 միլիոն բարել մերձավորարեւելյան նավթ, այժմ ավելի քան 30 միլիոն, արդեն 2010 թ. կոչտագործվի արդեն մոտ 45 միլիոն բարել: Տնտեսագետների կանխատեսումների համաձայն, 2005 թ. մեկ բարել ամենաէժան նավթի գինը կիասնի մինչեւ 30 դոլլարի:

ԵՐՎԱՆԴԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Երկխոսության ուղիով

Չինաստանը եւ Միացյալ Նահանգները իրենց միջեւ գոյություն ունեցող ահաւոր դարձած եւ մյուս բազմաթիվ խնդիրները կարող են լուծել երկխոսության միջոցով, հայտարարեց ՉԺՀ Պետխորհրդի փոխդարչապետ Լի Լանչինը: Վերջին երկու տարում Չինաստանը եւ ԱՄՆ-ը կազմակերպել են երեք խոշոր հարց, այդ թվում մտավոր սեփականության, տարածքների եւ տուկաների մաքրելիության մասին, հայտարարեց նա Պեկինում ԱՄՆ ֆինանսների նախկին նախարար Ռ. Միլլերի հետ կայացած հանդիպման ժամանակ: Երկու երկրների առեւտրատնտեսական հարաբերություններում ծնացած խնդիրները նույնպես կարող են լուծվել երկխոսության միջոցով, փոխշահավետության, փոխադարձ գիջումների եւ փոխըմբռնման հիման վրա: Դա համապատասխանում է երկու դետությունների հիմնարար շահերին, ասաց Լի Լանչինը: Չինաստանը խոշորագույն զարգացող երկիր է, իսկ ԱՄՆ-ը՝ աշխարհի ամենամեծ զարգացած դետությունը: Ուստի հնարավորությունների միավորման դեպքում նրանք կկարողանան ոչ միայն օգտագործել միմյանց վիթխարի ներքին տուկաները, այլեւ ամենուրեք ուժեղացնել դրանց մրցունակությունը:

ՍՐՄԵՆԳԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Դրամա

Ստուգում են բանկի ծախսերը

Վերականգնման ու զարգացման եվրոդական բանկի բաժնետերերի դահանջով ստեղծված կոմիտեն առաջարկել է անցկացնել բանկի ընթացիկ ծախսերի համադարփակ հետաքննություն, որդեսզի իր հետեւությունները ներկայացնի այս տարվա ամռան կեսերին: Բանկը, որի կազմի մեջ մտնում են գրեթե 60 փայատեր երկրներ, հիմնվել է Բրիտանիայի մայրաքաղաքում երկու տարի առաջ՝ Կենտրոնական ու Արեւելյան Եվրոդայի երկրներին եւ նախկին ԽՍՀՄ հանրապետություններին ֆինանսական օգնություն ցույց տալու համար: Աղդիլին Մեծ Բրիտանիայի գործարար շրջանների «Դայնենշը բայզ» ազդեցիկ բանկը բանկին մեղադրել է սեփական կարիքների համար ավելորդ բազմամիլիոն ծախսերի կատարման մեջ, մասնավորապես վերջերս բացված նոր կենտրոնակայանի շեն հարդարման ու կահավորման համար, ինչը, թերթի կարծիքով, տեղի է ունեցել կարիքավոր երկրներին միջոցների անհետաձգելի հատկացման դայմաններում: Ստուգման անմիջական կատարողին դարզելու համար կիայտարարվի ֆինանսական վերստուգման մեջ մասնագիտացող միջազգային 4 խոշորագույն ֆիրմաների մրցույթ: Մեռում է ավելացնել, որ հետաքննության անցկացման համար կոմիտեն դահանջել է... 200-300 հազար ֆունտ ստեղինգ: Այնինչ, այդ գումարը միանգամայն բավարար է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոդայում առնվազն մեկ միջակ նախագիծ սկսելու համար:

ՍՐՄԵՆԳԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

Աֆղանստան

ՔԱԲՈՒԼԸ ԿՐԿԻՆ ԿՐԱԿԻ ՄԵՋ

կամ արդյոք ակնհա՞յտ է իրանական հետքը տաջիկական իրադարձություններում

Աֆղանստանի մայրաքաղաք Քաբուլի փողոցներում կատաղի մարտեր են ընթանում ղաբեղության նախարար Ահմեդշահ Մասուդի զինված կազմավորումների եւ օրիս ուղղվածության «Վահդաթ ալ-Էսլամի» կազմակերպության միջեւ. ծանր հրազենի եւ օդուժի գործադրմամբ. հաղորդում է «Ազատություն» կայանը: Մարտերն ընթանում են ԽՍՀՄ նախկին հյուպատոսարանի շրջակայքում, որը. կայանի թղթակցի վկայությամբ. անճանաչելի է դարձել ավերածությունների հետեւանքով:

Դիտորդների կարծիքով. քաղաքացիական ղաբեղազմի այս նոր ալիքի հիմքում ընկած է իրանամետ «Հիզբ է Էսլամի» կազմակերպության ղեկավար. Աֆղանստանի վարչապետ Գլոլբեդդին Հեքմաթյարի դայրարը ղաբեղության նախարարին կառավարության կազմից հեռացնելու համար. որին հետաքրքիր բոլոր միջոցներով դիմակայում է նախագահ Ռաբանին: Հիշեցնենք. որ մայրաքաղաքի վրա Հեքմաթյարի ձեռնարկած բազմաթիվ գրոհների ժամանակ. որի նոթատետրն է գրավել իշխանությունը երկրում. նախագահ Ռաբանիի իշխանությունը դաբեղանում էին Ահմեդշահ Մասուդի ջոկատները: Դիտորդների կարծիքով. «Վահդաթ ալ-Էսլամիի» գործողությունները հրահրում է Հեքմաթյարը. որն առերեւույթ առայժմ հավատարիմ է մնում Մեքքայում Ղուրանի վրա տված երդմանը՝ չվերսկսել դայրարն իշխանության համար եւ գնալ խաղաղ բանակցությունների ճանապարհով: Սակայն Դակիսանի միջնորդությամբ ընթացող բանակցություններն զինված կազմավորումների միջեւ մտել են փակուղի. եւ ելքի որեւէ հույս չկա:

Բոլորի. այդ թվում նաեւ Հեքմաթյարի համար անսպասելի եղավ Հյուսիսային Աֆղանստանի նախագահ գեներալ Դոստոմի զորքերի ժամանումը Քաբուլ. որոնք դաբեղան կանգնեցին դաբեղության նախարար Մասուդին: Սա կտրուկ ձեւով փոխեց ուժերի հարաբերակցությունը. քանզի Դոստոմի ուժերը հագեցած են զրահատեխնիկայով եւ օդուժով: Հիշեցնենք նաեւ. որ գեներալ Դոստոմի ազգնկական ջոկատի անցումը մուջահեդների կողմը վճռեց մոսկովյան դրածո Նաջիբուլլայի իշխանության ճակատագիրը: Առայժմ. վերջնականապես չճշտված տվյալներով. Քաբուլում վերջին մարտերի ընթացքում արդեն զոհվել են տարբեր հարյուր մարդ. իսկ չորս հարյուր վիրավորվել:

Արեւմտյան աղբյուրներից ստացվող տեղեկությունները Աֆղանստանում ռազմաքաղաքական ուժերի դասավորության վերաբերյալ վերջնականապես հանգեցնում են այն եզրակացությանը. որ տաջիկական իրադարձություններին իրանամետ ուժերի. դրանով իսկ Իրանի մասնակցությունը. մեղմ ասած. չափազանցված են: Եթե Աֆղանստանի հյուսիսում անսահմանափակ իշխանություն վայելող գեներալ Դոստոմը այդպես խանդոտ կերպով դայրարում է օրիս ուղղվածության փուշտունական ջոկատների դեմ. որոնք համարվում են Իրանի հենարանն այդ երկրում. արդա. ինչպես կարելի է ենթադրել. հենց իրանամետ ուժերն են կազմակերպում տաջիկ արմատականների դայքարը Դուշանբեի իշխանությունների դեմ: Ակնհայտ է. որ գեներալ Դոստոմը դարգադեպ չի հանդուրժում օիաների աշխուժացումն իր վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Դոստոմ-Ռաբանի-Մասուդ եռանկյունուն վերահսկում եւ աջակցում են Արեւմուտքն ու նրա դաշնակիցներ Պակիստանը եւ Սաուդյան Արաբիան: Ուստի միայն Աֆղանստանի արեւմտամետ ուժերն են. որ կարող են կազմակերպել տաջիկական ընդդիմության գործողությունները: Իսկ «իրանական միջամտության» ծեծված կարգախոսն ընդամենը քող է տաջիկ արմատականների գործունեության մեջ Արեւմուտքի մասնակցությունը թաքցնելու համար: Թեեւ վերջին ժամանակներս հաղթող սարքված այդ քողն անկհայտ ճեղքվածքներ է տալիս. քանզի չեզոք աղբյուրներից եկող տեղեկությունը վկայում է. որ դաբեղական Դուշանբեի դեմ իսլամ տաջիկների դայքարի ֆինանսական հիմնական ներարկիչը Սաուդյան Արաբիան է. որն առանց իր մեծ եղբոր Միացյալ Նահանգների. նման արմատական քայլերի հազիվ թե գնա:

Ս. Հ.

Ահավոր ռմբակոծումներ Քաբուլում: Վերջին 3 ամիսների ամենաահավոր ռմբակոծումներն Քաբուլում դասահեցին չորեքշաբթի. երբ մրցակից զինախմբերը բնդանոթով. հրթիռներով ու ծանր գնդացիրներով կոիվներ մղեցին մայրաքաղաքի հատկապես արեւմտյան շրջաններում: Օտարերկրյա լրագրողների վկայությամբ. այդ շրջաններում փողոցները լի են դիպկներով: Մարդիկ խենց վիրավոր հարազատներին շրջանից դուրս են փոխադրում միայն ուսերի վրա:

Իսլամի ազդեցությունն աճում է

*Հազիվ թե մեկ տարի առաջ հնարավոր էր դատկերացնել. որ սիրիացի երիտասարդներն իրենց ազատ ժամանակը կանցկացնեն ծխալից նկուղներում տեղադրված բարերում: Այնտեղ նրանք գարեջուր են խմում. ֆնարկում ամենօրյա գործերը եւ լսում բանբի երաժշտություն: Սակայն նոր Սիրիան. չնայած շեղ մեքենաներին եւ աշխատող հեռախոսներին. դիչ է տարբերվում մաշված տախտակներով եւ գրկանքներով լի նախկին երկրից: Սիրիացիները Լիբանանից ադորինի զուգարանի բանկարժեք թույլ էին ներմուծում: Այժմ նրանք կարող են այն գնել տեղական առուտրարանեցներում: Սակայն շատերի համար գներն անհասանելի են: Բարգավաճման փայլը վերադում են ադդայի հանդեպ ընդհանուր լավատեսությանը: Վերջադես հնարավորություն կա դադարեցնել դատերազմն Իսրայելի հետ: Նախագահ Հաֆեզ Ասադը հաստատել է տնտեսական բարեփոխումների հնարամիտ ծրագիր հայրենիքից հեռացած սիրիացիներին եւ նրանց դրամը հրադարձելու համար. հանգիստ թողնելով Սիրիայի դեսական աղբյուրաբերության փափկանյաց ղեկավարներին: Վերացվել են ներմուծման հետ կապված արգելքները. ինչը նդաստում է. որդեսզի տեղական շուկան հագեցվի սպառողական ադրանքներով: Նախկին ԽՍՀՄ ժառանգորդ Ռուսաստանը հազիվ թե Սիրիայից դահանջի վճարել 12 միլիոն դոլարի ռազմական դարտը:

Հաֆեզ Ասադի համար տնտեսական վերածննդի հիմք է ծառայում թիվ 10 օրենքը. որն ընդունվել էր 1990 թվականին: Օրենքը լավ դայմաններ է ստեղծում ներդնողների համար. որոնք այլեւս չդետք է հայտնեն իրենց արժույթի ելակետերի ադբյուրների մասին: Բազմաթիվ նախագծեր հավանություն ստացան բդթի վրա: Սակայն նոր գործերով զբաղվում են ձեռներեց մարդիկ. որոնք հարյուրավոր միկրոավտոբուսներ են ներմուծել դդրդացող հասարակական ավտոբուսների փոխարեն:

Սակայն Արեւմտյան եւ Պարսից ծոցի երկրների ներդնողները չեն շտապում Սիրիա. որի ենթակառուցվածքը վատանություն չի ներշնչում: Ջարգացման հիմնադրամի հաշվին վերակառուցվել են կդյուղին եւ հեռախոսային ցանցը: Այդ հիմնադրամը ֆինանսավորվում է Քուվեյթի կողմից. որ այդ ճանապարհով իր երախտագիտությունն է հայտնում Սիրիային Իրաքի դեմ դատերազմին մասնակցելու համար: Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիային. ադա այն օրական մի քանի ժամով անջատվում է: Ներդնողները գտնում են. որ Սիրիայի տնտեսական օրենքները շատակ չեն: Օրինակ. նախագահի հրամանագրով դեռ ադորինի են համարվում կայուն արժույթով իրականացվող գործարքները: «Միացյալ Նահանգներում նոր օրենքը փոխարինում է հին: Գիտես. թե հնգ ինչ է ադասում: Այստեղ ամեն ինչ կարող է փոխվել նույնիսկ վաղը», ասաց սիրիացի մի գործարար:

Իսաամ Անբուբան. որը վերջին 22 տարիների մեծ մասն անցկացրել է իր երկրից դուրս. արձագանքելով նախագահ Ասադի կոչին. մի խումբ հայրենակիցների հետ վերադարձել է տուն: Թիվ 10 օրենքը թույլ տվեց Անբուբային իր հետ բերել սեփական «Մերսեդեսը»: Ներկայումս նա ամերիկյան ոճով տուն է կառուցում Հոմսում. իսկ ամերիկացի խորհրդականն օգնում է իրեն 6 միլիոն դոլար արժույթով սոյայի գործարանի շինարարության մեջ: Նա ամբողջությամբ վստահում է նախագահին եւ «ստվերում գտնվող հայրենակիցները» իրեն այլեւս չեն անհանգստացնում:

Այնուամենայնիվ. շատ սիրիացիների համար կյանքն էլ ավելի է դժվարանում: Թիվ 10 օրենքով խոստացված նոր աշխատատեղերի ստեղծումը դեռ հետաձգվում է: Չնայած վերջին տարիների ընթացքում նավթից ստացվող եկամուտները կտրուկ աճել են. Սիրիայի արդյունաբերությունն անբավարար դեր է խաղում հանրաշխարհային շուկայում: Ջարքոնի ադրող գործարար աշխարհի ոչ մի ներկայացուցիչ չի ադասում. որ դեսության կողմից ղեկավարվող ընկերությունները կսեփականաշնորհվեն: Այդ ձեռնարկությունների ղեկավարները քաղաքականապես չափազանց ամուր են կադակցված:

Ծնելիության մակարդակը Սիրիայում կազմում է տարեկան 3.8 տոկոս. եւ այս դայմաններում դեսությունը դժվարությամբ է բավարարում սոցիալական դահանջները: Բնակչության մոտ 65 տոկոսը կազմում են սուննիները. մնացածը շիաներ են. ալավիթ դավանանքի փոքրաթիվ հետեւորդներ (ի դեպ. նրանց է դատկանում ինքը Հաֆեզ Ասադը) եւ տարբեր քրիստոնյա ադանդների ներկայացուցիչներ: Վարչակարգի աշխարհիկությունը ժողովրդականություն է վայելում փոքրամասնությունների շրջանում: Սակայն աշխարհիկությունը եւ ադանդների միջեւ խաղաղությունը կարող է վնասվել տնտեսական անհավասարության դայմաններում:

Շրջանում տարածվող ռազմականացված իսլամի գաղափարները հավանաբար կհասնեն Սիրիա եւ կընդունվեն երկար տարիներ ճնշվող սուննիների կողմից: Նախագահ Ասադի գործունեա ռոսիկանությունը խափանում է իսլամական հաղթանակության յուրամանյուր դրսեւորում: Այնուամենայնիվ. սիրիացիները սկսել են ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել իսլամի նկատմամբ եւ ավելի բացահայտորեն հետեւել իսլամական ավանդույթներին: Շատացել է ավանդական գլխաշոր կապող կանանց թիվը: Իսլամն ուսումնասիրող խմբերում ընդգրկվում են հասկադես միջին եւ բարձր խավերի կանայք: Կառուցվում են բազմաթիվ մզկիթներ: Նույնիսկ նրանցից մեկը կառուցվում է հյուսիսում գտնվող Համա քաղաքում: Այն նախագահի ճվերն է իսլամականներին: Հենց Համայում 1982 թվականին Սիրիայի անվտանգության ուժերը դաժանորեն ճնշեցին իսլամ ծայրահեղականների ադստամբությունը. սպանելով մոտ 15 հազար մարդ: Համայի դեղքերին նախորդել էին Հոմսում. Հալեդում եւ այլ տեղերում տեղի ունեցած իսլամ արմատականների ցույցերը: Այդ օրվանից հաստատվեց անդորր: Ներկայումս կրոնը աճող մշակութային ուժ է եւ դեռ քաղաքական շարժում չէ:

Խորամանկ Ասադը դետք է ադահովի այդ անդորրը: Նա ինքը հովանավորեց կրոնական զարթոնքը եւ աջակցեց. որդեսզի Դամասկոսի համալսարանում դասավանդող Մուհամադ Սաիդ Բութին շաբաթական մեկ անգամ իսլամի մասին դասախոսություններով հանդես գա դետական հեռուստատեսությամբ: Բնականաբար. տեյխ Բութին արտահայտում է նախագահ Ասադի վերաբերմունքն իսլամական ծայրահեղության հանդեպ: Եվ դա հասկանալի է. քանի որ մահմեդականները մեծ գրկանքներ են կրել Իսրայելի եւ Արեւմուտքի ձեռքում: Սակայն սխալ է մտածել. որ իսլամական դետությունը կարող է ստեղծվել ուժի միջոցով: Նա խրատում է համբերություն: «Ճիշտ ուղին այն է. որ մարդիկ սիրեն իսլամը: Վաղ թե ուշ իսլամը կդեկավարի հասարակությունը: Դա անխուսափելի է». ասում է տեյխ Բութին:

Պատրաստեց
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

Լուրերի Հոսք

Գործադուլները սասկանում են ԳՖՀ-ում

Գերմանիայի արեւելյան շրջանների մետաղագործական ձեռնարկությունների աշխատավորները չորեքշաբթի քվեարկությամբ որոշեցին շարունակել արդեն 2-րդ շաբաթը տեղի ունեցող գործադուլները. դահանջելով աշխատավարձի համահավասար դայմաններ երկրի արեւմտյան շրջանների արհեստակիցների հետ. ինչդես խոստացվել էր 2 տարի առաջ Գերմանիաների վերամիացման ժամանակ: Գործադուլավորների արհեստակիցները չորեքշաբթի բազմահազարանոց երթեր կատարեցին արեւմտյան շրջաններում. որդես համերաշխության ցույց:

ՄԱԿ-ի բանաձեւ Հյուս. Կորեայի դեմ

ՄԱԿի Անվտանգության խորհուրդը բանաձեւ ընդունեց Հյուսիսային Կորեայի դեմ. նրանից դահանջելով ռազմական կենտրոնները բացել միջուկային զենքի միջազգային ինսպեկտորների առաջ եւ դադարեցնել ՄԱԳԱՏ-ից դուրս գալու որոշումը: Հյուսիսային Կորեայի արտգործնախարարը չորեքշաբթի գիշեր մերժեց Անվտանգության խորհրդի դահանջը. այն համարելով դատերազմի հայտարարություն իր երկրի դեմ:

Թաիլանդում նոր դիակներ

Նախորդ օրը մայրաքաղաք Բանգոկի խաղալիքների գործարանում ծագած հրդեհի հետեւանքներն ավելի են ծանրանում: Ոստիկանությունը չորեքշաբթի փլատակների տակից դուրս բերեց 30 նոր դիակ. ինչը 230-ի բարձրացրեց զոհվածների թիվը. մինչ վիրավորներինը անցնում է 500-ից:

Փախստականները վերադառնում են

Մայիսի 16-ին Աֆղանստանից Տաջիկստանի հարավ դետք է վերադառնան 27 հազար տաջիկ փախստականներ. որոնց մեծ մասն անցել է հարեւան դետության տարածք 1992 թ. աշնանը. փրկվելով կառավարական եւ ընդդիմադիր զինված խմբավորումների միջեւ տեղի ունեցող ռազմական գործողություններից: Այդ մասին չորեքշաբթի Դուշանբեում լրագրողներին հայտարարեց խորհրդարանի ղեկավար Էմոմալի Ռահմոնովը: Նա հաղորդեց. որ մայիսի 11-ին իր առաջին տեղակալ Աբդուլամաջիդ Դոստիեւը մեկնել է երկրի հարավային շրջաններ նախապատրաստական աշխատանքները կարգավորելու համար: Տարբեր աղբյուրների տվյալներով, ներկայումս Աֆղանստանի տարածքում գտնվում են ընդամենը 50-90 հազար տաջիկ փախստական: ԻՖ

Ուկրաինան հրթիռներ չի վաճառել

Ուկրաինայի դատերազմության նախարար Կոնստանտին Մորոզովը ԻՖ-ին տված հարցազրույցում հերքել է զանգվածային լրատվության միջոցներում հայտնված այն հաղորդումները. թե Ուկրաինան 8 թեւավոր հրթիռ է մատակարարել Իրանին: «Դա սուտ է». ընդգծել է նա: Կ. Մորոզովը հերքել է այն հաղորդումները. թե Կիեւի եւ Թեհրանի միջեւ առկա է իրանական բանակի արդիականացման համաձայնագիր: ԻՖ

Աֆրիկային հարկավոր է 950 միլիարդ դոլար

Աֆրիկային 950 միլիարդ դոլար օգնություն է դետք. որդեսզի 1993-2005 թթ. ամեն տարի առդահովվի 6 տոկոս տնտեսական աճ: Այս մասին հայտնեց ՄԱԿի Աֆրիկայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղար Լայաշի Տակերը: Ադիս Աբեբայում հանձնաժողովի 28-րդ նստաշրջանի փակման ժամանակ նա նշեց. որ 1992 թ. «սեւ աշխարհամասում» արտադրության ծավալն աճել է 1.5 տոկոսով՝ 1991 թ. 2.3 տոկոսի դիմաց: Նույն ժամանակաշրջանում բնակչության աճը կազմել է 3 տոկոս: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՌՏԱՌ-ՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

ՄԱԿ-ի արգելքը վնասել է նաեւ Ռումինիային

Սերբիայի ու Չեռնոգորիայի դեմ ՄԱԿ-ի սահմանած դատժամիջոցների կատարման հետեւանքով Ռումինիայի անմիջական կորուստները կազմում են 1 միլիարդ 540 միլիոն դոլար: Այս մասին երկրի ֆինանսների նախարարությունում հայտարարեց դեսֆարտուղար Իոան Միխայ Պոպան, որը նշեցաբրի օրը հանդիպում ունենալով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ամերիկացի փորձագետ Ջեյմս Գրոսմանի հետ, որը Բուխարեստ է ժամանել արգելքից Ռումինիայի կորուստը գնահատելու համար: Ռումինիայի ֆինանսների նախարարության ներկայացուցիչն ավելացրեց, որ հաշվարկների համաձայն, ազգային տնտեսությունն անուղղակի կորուստները կազմել են մոտ 7 միլիարդ լեյ: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Ձերբակալվեց իտալական մաֆիոզների խումբ

Ֆրանսիական ոստիկանության բանբերը հայտարարեց, թե Ֆրանսիական Ռիվիերայում ձերբակալվել են իտալական մաֆիայի կարեւորագույն ցանցերից մեկի՝ Քոմորոյի 24 անդամներ՝ նրանց դատաքննիչ Միշելե Չաձայի գլխավորությամբ: Բանբերը տեղեկացրեց, թե նույն ավազակախմբի ուրիշ 40 անդամներ վերջերս ձերբակալվել են Իտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում եւ այլուր: Ըստ նրա, ցանցը, որ մեծագույնն էր հարավային Ֆրանսիայում, կարելի է համարել ամբողջովին չեզոքացված:

Կառի միջոցներին նվիրված միջազգային խորհրդաժողով

Կառի միջոցների բնագավառում մասնագիտացող առաջատար ուկրաինական եւ օտարերկրյա ֆիրմաների նորագույն մշակումներն ու սարքավորումներն են գտնվում «Նեոկոմ-93» խորհրդաժողովի մասնակիցների ուշադրության կենտրոնում: Այն կազմակերպել են ամերիկյան Ֆամանում Ֆիրման եւ Կիեւի համալսարանի հետազոտությունների ու ադյուտանտ դասդումների ամբիոնը: Խորհրդաժողովին մասնակցում են «ամերիկյան հեռախոս եւ հեռագիր» միջազգային ընկերության, եվրոպայի տիեզերական գործակալության, գերմանական «Սիմենս» ֆիրմայի, լրատվական տեխնիկայի միջոցներ արտադրող ռեսուրսական ձեռնարկությունների «Ուկրտելեկոմ» ընկերակցության, «Վեկտոր» ֆիրմայի եւ այլ ֆիրմաների մասնագետներ: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Զ. Գամսախուրդիայի կենտրոնակայանը տեղափոխվել է Դաղստան

Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիան իր կենտրոնակայանը Գրոզնիից փոխադրել է Դաղստանի Կոյուրբ: Սա նշանակում է 13 տարի առաջ նա այնտեղ ամսորված էր եղել որպես այլախոհ: Ինչպես նշում է Վրաստանում լույս տեսնող «Միմոմխիվլելի» թերթը, Գամսախուրդիան «այդ քայլին է դիմել անվտանգության առաջնորդման համար, քանի որ Գրոզնիում իրադրությունն անկայուն է»: ՆՏ

Սեզանի նատյուրմորտը վաճառվեց 28.6 միլիոն դոլարով

Պոլ Սեզանի «Նատյուրմորտ խնձորներով» նկարը Նյու Յորքի «Սոթբիզ» աճուրդում վաճառվել է 28,6 միլիոն դոլարով: Դա ֆրանսիացի գեղանկարչի ստեղծագործության համար երբեւիցե առաջարկված ամենամեծ գումարն է: Նկարն աճուրդին էր ներկայացրել նավատերերի ենթիրկոս ընտանիքը, եւ ակնկալվում էր, որ նատյուրմորտի համար կտան 10-15 մլն դոլար: Նկարի գնորդը ցանկացել է անհայտ մնալ: Մինչ այդ Պոլ Սեզանի «ամենաթանկ» նկարը համարվում էր «Խնձորները եւ անձեռոցիկը» նատյուրմորտը, որը 1989 թ. դարձյալ աճուրդում վաճառվել էր 17 մլն դոլարով: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Մշակույթ

«Փարիզյան էմիգներ»

Ադեն մեկ տարի է, ինչ Երեւանում գործում է «Ֆրանսերեն լեզվի եւ մշակույթի կենտրոնը»: Այն բացվել է անցյալ մայիսին Երեւանի օտար լեզուների պետական ինստիտուտին կից: Բացման շնորհանդեսը ներկա էին Լիոնի քաղաքապետարանի դատավիրակությունը քաղաքագլուխ Միշել Նուարի եւ փոխքաղաքագլուխ Վահե Մուրադյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Ֆրանսուազ Մաի դ'Արբինգը: Հենց Լիոնի քաղաքապետարանն էլ դարձել է այս կենտրոնի հովանավորը:

Կենտրոնի տնօրենն է օտար լեզուների ինստիտուտի ֆրանսերենի ամբիոնի դոցենտ Զավեն Հարությունյանը: Նա սիրով դատասխանեց մեր թղթակցի մի քանի հարցին:

– Պարոն Հարությունյան, օրերս «Մայրաքաղաք» ծրագրում ձեզ Լիրանին տեսա սիրված երգչուհի եւ երգահան Էլվինա Մակարյանի հետ: Մի քանի տարի առաջ ձեզ տեսել էի զարձյալ Լիրանին, Ալլա Պուգաչովայի կողքին: Սա ի՞նչ զուգադիպություն է...

– Ինչ վերաբերում է Պուգաչովային, դա զուտ դատահարություն էր: Պարզապես Մոսկվայում առիթ եղավ նրա հետ ծանոթանալու իր տանը. «Իզվեստիայի» թղթակից Գագիկ Կարապետյանի հետ միասին: Հետո այնպես սացվեց, որ միասին Երեւան վերադարձանք: Եւ դյարզվեց, որ ես Ալլա Պուգաչովայի եղբկի երեւանյան ծանոթներից եմ, եւ նա ինձ խնդրեց իրեն ներկայացնել հայաստանյան հեռուստաղիտողին: Իսկ Էլվինա Մակարյանի մասին ասեմ, որ մեր համագործակցությունն սկսվել է տակավին 15 տարի առաջ, երբ ես հայկական հեռուստատեսությամբ վարում էի ֆրանսերենի դասերը:

Եւ ահա առաջիկայում, ավելի ստույգ՝ մայիսի 15-ին մարզահամերգային համալիրի համերգային դահլիճում «Ֆրանսերեն լեզվի եւ մշակույթի կենտրոնը» Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի բաժնի եւ հայկական հեռուստատեսության «Մեղեդի» ստեղծագործական միավորման հետ համատեղ կազմակերպում է ֆրանսիական երգի մեծ փառատոն:

– Ինչպե՞ս ծագեց գաղափարը, եւ ի՞նչ նոյատակ է հետապնդում փառատոնը: Ինչ խոսք, կասկած չկա, որ հայ ունկնդիրը միշտ խորը սեր է տածել ֆրանսիական երգի նկատմամբ:

– Այդպես է, չնայած ներկայումս կարծես ավանդույթները խամրում են ամերիկանիզմի հորձանքի դայմաններում: Այնինչ, հիշենք, որ 60-70-ական թվականներին մեր մշակութային կյանքը լցվում էր ֆրանսիական երգով: Կարելի է ասել, որ մեր սերունդը, օրինակ, դաստիարակվեց ֆրանսիական երգին ունկնդիր: Ազնավուր, Կառվարենց, Միշել Լեգրան եւ ֆրանսահայ երգիչների մի ամբողջ համաստեղություն: Ոչ մի այլ երկրում հայազգի երգիչներն այդքանի դիրք չեն գրավել: Ես նույնիսկ կասեի, որ մենք հայերս, նույնքան իրավունք ունենք ֆրանսերեն երգը մեր բնամարդակներից հնչեցնելու, որքան իրենք ֆրանսիացիները:

– Ես ներկա եմ եղել ձեր կենտրոնի բացման արարողությանը, բացի այդ, հիշում եմ կամերային երաժշտության տանը «Ֆրանսիական արվեստը եւ մենք» բարի առաջին համերգը. այնպես որ, վստահորեն կարող եմ ասել, որ այս նոր միջոցառումը խոշոր իրադարձություն կլինի մեր մշակութային կյանքում:

– Հուսանք: Թող անհամեստություն չթվա, սակայն Հայաստանում առաջին անգամ է կազմակերպվում նման երգահանդես (գալահամերգ): Շառլ Ազնավուրի եւ Էդիթ Պիաֆի երգերը Էլվինան ներկայացնելու է որպես ամբողջական մի բեմականացում:

– Այսինքն, Էլվինա Մակարյանի համար սա դրեմիերա է: Ձեզ համար, որքան գիտեմ, նույնդես, բանի որ «Փարիզյան էմիգների» սցենարիստը եւ ռեժիսորը դուք եք: Տեղյակ եմ նաեւ, որ մեր մեծանուն ազգակից Շառլ Ազնավուրը «Փարիզյան էմիգների» հաստատությամբ շնորհավորանք է հղել: Արտանց միանում եմ: Եւ ձեզ, եւ Էլվինա Մակարյանին ցանկանում եմ բոլոր մտահղացումների հաջող իրականացում: Իսկ մեր ընթերցողներին հիշեցնում, մայիսի 15, ժամը 15, ՄՀՀ-ի համերգային դահլիճ: Վ. Ս.

ԱԶԳ-ՄԱՐԶԱԿԱՆ

Պաղենի նոր փորձությունը

Մայիսի 26-ին Մյունխենում, չեմպիոնների լիգայի եզրափակիչում այժմ Միլանի թիմի կազմում հանդես եկող ժան-Պիեռ Պաղենը Եվրոպայի գավաթին տիրելու համար ստիպված կլինի ուրանալ իր հոգեհայր Բեռնար Տաղիին եւ խաղալ Մարսելի «Օլիմպիկի» իր նախկին թիմակից ընկերների դեմ: Այլ կերպ ասած, հաջողության հասնելու համար նա ստիպված կլինի դավաճանել Մարսելին եւ մարսելցիներին: Վիճակահանության եւ դասակարգման անգութ տրամաբանությունը Մարսելին Պաղենի տված հուզիչ հրաժեշտի եւ Մյունխենում նախկին թիմակիցների հետ կայանալիք ծանր հանդիպման միջեւ մեկ տարուց էլ դյակաս ժամանակ բողեց:

«Վեց տարի շարունակ ժան-Պիեռն ամեն առավոտ արթնանում էր նույն սենեակում մտով. Եվրոպայի գավաթ նվաճել «Օլիմպիկի» կազմում: Եւ ահա նա եզրափակիչում է, միայն թե խաղալու է իր նախկին ընկերների դեմ», ասում է Միշել Պլատինին, որը Թուրինի «Յուվենտուսի» կազմում խաղալիս ինքն էլ ստիպված էր եղել Եվրոպայի գավաթի մրցումներում խաղալ իր նախկին թիմակիցների դեմ:

«Պաղենի դեպքը Եվրոպական մեկ ակումբից մյուսը խաղացողի դարզ տեղափոխություն չէ: Բանն այն է, որ Պաղենը «Օլիմպիկի» հոգեզավակն է», ասում է այդ թիմի փոխնախագահ ժան-Լուի Լեւրոն: Իրոք, Պաղենը որդես ֆուտբոլիստ ձուլավորվել է Մարսելում: Բեռնար Տաղիի ակումբ եկած սկսնակ ֆուտբոլիստը սկզբում այնքան անհարմար էր, որ նրա հարվածներից հետո գնդակը հաճախ հայտնվում էր տրիբունաներում: Միայն երկարատեւ անհաջողական մարզումներից հետո անփորձ դատանին դարձավ մարզախարիին հայտնի ժան-Պիեռ Պաղենի:

Սակայն Պաղենի եւ «Օլիմպիկի» մերմությունը չափազանց սեռ չէ՞ արդյոք: Միլանի կենտրոնական հարձակվողի խորամանկություններին ո՞վ է ավելի լավ ծանոթ, քան նրա ընկեր Բազիլ Բոլին, որը զուցե Մյունխենում գոլ խփելու առաջադրանք ստանա: «Փոխարենը ժան-Պիեռը, անկասկած, իր մարզիչին որոշ արժեքավոր տվյալներ կհայտնի «Օլիմպիկի» ուժեղ եւ թույլ կողմերի մասին», ենթադրում է Միշել Պլատինին: Պաղենը հեռախոսով իր մտահոգի ընկերներին հավաստիացնում է, թե ինքը կնախընտրեր եզրափակիչում խաղալ շոտլանդացիների դեմ: «Իրոք, չկա ավելի տհավոր բան, քան նրանց կողմից մերժվելը, ովքեր դատեղ են քեզ», խոստովանում է Պլատինին, որի համար մահացու վիրավորանք էին եղել Փարիզի Պարկ դե դրենս մարզադաշտի սուլոցները, երբ ինքը 1983 թ. «Պարի Սեն-Ժերմենի» դեմ էր խաղում «Յուվենտուսի» կազմում: Էլ ավելի վատ վիճակում հայտնվեց ֆրանսիական ֆուտբոլի երկրորդ տարգիր ատող Էրիկ Կանտոնան, որը նույնիսկ 1000 ֆունտ ստեռլինգ տուգանքի ենթարկվեց «Լիդսի» իր նախկին երկրդագուներից մեկի վրա թքելու համար: Այդ օրը Կանտոնան առաջին անգամ հանդես եկավ «Մանչեսթրի» կազմում, եւ «Լիդսի» 30 հազար մոլեգնած երկրդագուները նրան ընդունեցին «քիռ» եւ «Հուդա» բղավոցներով...

«Պաղենն ինքնուն որոշ ստիպված կլինի մոռանալ իր անցյալը եւ դայքարել այժմյան գործատուի օգտին», եզրակացնում է Ռեմոն Կոդան միակ ֆրանսիացին, որն արդեն եղել է Պաղենի վիճակիցներ Բազիլ Բոլի եւ Ալան Պրիգի հետ: Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ժան-Պիեռ Պապենը ոչ մի դեպքում չի ցանկանա, որ Պաղենը հանդիպի Մարսելի դեմ: Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ժան-Պիեռ Պապենը ոչ մի դեպքում չի ցանկանա, որ Պաղենը հանդիպի Մարսելի դեմ: Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ժան-Պիեռ Պապենը ոչ մի դեպքում չի ցանկանա, որ Պաղենը հանդիպի Մարսելի դեմ:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

Խաղեր երկու ճակատով

Այսօր հանրադետության երեք մարզադաշտերում կկայանան Հայաստանի Հանրադետության բարձրագույն խմբի առաջնության 5-րդ տուրի եւ գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ դատասխան հանդիպումները:

«Նաիրի» մարզադաշտ, 17:00
ՖԻՄԱ-ՀՄՄ-«Կոտայք»
Էջմիածին, քաղաք. մարզադաշտ, 17:00
«Ձվարթնոց»-«Կանազ»
Աբովյան, քաղաք. մարզադաշտ, 16:00
1/2 եզրափակիչ
«Բանանց»-«Շիրակ» 1:2, —
Հաջորդ օրը կմրցեն.
«Հրազդան» մարզադաշտ, 16:00
1/2 եզրափակիչ
«Արարատ»-ՀՄԸՄ 2:2, —
Դիլիջան, քաղաք. մարզադաշտ, 17:00
«Իմդուլս»-«Երազանք»
«Նաիրի» մարզադաշտ, 17:00
«Նաիրիտ»-«Մալաթիա Կիլիկիա»

Գավաթի եզրափակիչ հանդիպումը նախատեսված է անցկացնել մայիսի 25-ին «Հրազդան» մարզադաշտում: Քանի որ նախօրոք նշանակված մայիսի 10-ի գավաթի եզրափակիչ հանդիպումները «Շիրակ»-ՀՄԸՄ լրացուցիչ հանդիպման դատճառով հետաձգվեցին եւ նշանակվեցին մայիսի 14 եւ 15-ին, այդ իսկ դատճառով այդ օրը նշանակված 5-րդ տուրի «Բանանց»-«Ցենտ», ՀՄԸՄ-«Արարատ» եւ «Շիրակ»-«Վան» հանդիպումները հետաձգվել են մինչեւ օգոստոսին նշանակված ղուանտային օրերը: ■

Իտալական ֆուտբոլի հաղթարշավը շարունակվում է

Իտալական ակումբները լրջորեն են տրամադրված եվրոդական գավաթների խաղարկությունում: Վերջին տարիներին եվրոդական գավաթների ոչ մի եզրափակիչ խաղ առանց իտալական ակումբների գրեթե չի անցկացվում: Իտալիայի ազգային առաջնությունն, ի տարբերություն մյուս երկրների, ավելի կազմակերդված է եւ թիմերում հանդես են գալիս մեծ թվով արտասահմանից հրավիրված ֆուտբոլիստներ, որոնք իրենց երկրներում ազգային հավաքականների խաղացողներ են: Այսդես, եթե ըստ Իտալիայի ֆեդերացիայի կանոնադրության մի թիմում թույլատրվում է հայտավորել երեք արտասահմանցի, ապա գրեթե բոլոր թիմերում նրանց թիվն անցնում է թույլատրելի սահմանը: Առաջնության դահլիճում դատկերանում է Միլանին, որտեղ միանգամից վեց արտասահմանցի են հանդես գալիս:

Նախանցյալ օրը Լոնդոնի «Ուեմբլի» հանրահայտ մարզադաշտում եվրոդական գավաթակիրների գավաթի խաղարկության 33-րդ եզրափակիչում հանդիպեցին իտալական «Պարմա» եւ բելգիական «Ռոյալ Անտվերդեն» թիմերը: Նախորդ փուլում «Պարմա» երկու հանդիպումներում հաղթել էր Մադրիդի «Ատլետիկոյին», իսկ բելգիացիները երկու խաղի արդյունքներով (1:2, 3:1) առավելության էին հասել Մոսկվայի «Սպարտակի» նկատմամբ: Հենց խաղասկզբից թիմերն անցան գոհների, եւ արդեն 9-րդ դրդեին իտալացի Սինոսսին բացեց հաշիվը, իսկ մի քանի դրդ անց (13-րդ դրդ) Սելվերեյնսը հավասարեցրեց այն: Չնայած դրան, իտալացիները տիրում էին նախաձեռնությանը եւ մինչեւ ընդմիջում կարողացան երկին առաջ անցնել հաշվի մեջ, դա արեց Մելին: «Ռոյալ Անտվերդենի» բոլոր ջանքերը հաշիվը հավասարեցնելու համար անցան ապարդյուն, իսկ խաղավարից 6 դրդ դարձյալ Սինոսսին անցկացրեց նրանց դարդասը, որն էլ ապահովեց «Պարմայի» վերջնական հաղթանակը:

Իտալական երեք թիմերից, որոնք դուրս են եկել եվրոդական գավաթների եզրափակիչներ, «Պարմա» առաջինը նվաճեց դատվավոր գավաթը: Դա այս ակումբի առաջին հաջողությունն էր եվրոդական գավաթների խաղարկությունում:

Ընդհանրապես գավաթակիրների գավաթը խաղարկվում էր 33-րդ անգամ, եւ «Պարմա»-ն դարձավ 28-րդ գավաթակիրը:

Այն բանից հետո, երբ 1955 թ. Հին աշխարհամասում անցկացվեց առաջին միջազգային մրցաշարը չեմպիոնների գավաթը, նրան մասնակցել ցանկացողների թիվը զգալիորեն աճեց, չնայած գավաթին կարող էին մասնակցել միայն եվրոդական երկրների չեմդիոնները: Համանման մրցաշար սկսեց կազմակերդվել նաեւ եվրոդական երկրների գավաթակիրների համար: Այն նախաձեռնեցին 7 եվրոդական երկրների ազգային ֆեդերացիաներ (Ավստրիա, Հունգարիա, Իտալիա, Չեխոսլովակիա, ԳԴՀ, Շվեյցարիա եւ Հարավսլավիա): Եւ 1960 թ. մարտի 26-ին Վիեննայում այս երկրների ներկայացուցիչների խորհրդակցությունում կազմվեց մրցումների կանոնակարգը: Առաջին խաղարկությանը մասնակցում էին 10 դետությունների գավաթակիրներ: Նոր մրցաշարի առաջին հանդիպումը կայացավ 1960 թ. հուլիսի 31-ին Բեռլինում, որտեղ տեղի «Հորմբրսը» 2:1 հաշվով հաղթեց հոլանդական «Գլազգո Ռեյնջերսի» նկատմամբ: Նույն թվին այս գավաթը դատասխանատու ճանաչվեց ՈՒԵՖԱ-ի կողմից եւ սկսեց անցկացվել նրա դրոշի ներքո:

Գավաթակիրների գավաթի ներկա խաղարկությանը փաստորեն մասնակցում էին Եվրոդայի առաջատար ակումբները, նույնիսկ այն երկրներում, որտեղ ազգային գավաթի խաղարկությունը մղվել էր ետին դլան, այս գավաթը շնորհիվ զգալիորեն աճել է ուշադրությունը նրանց նկատմամբ:

Նախորդ տարիներին գավաթակիրների գավաթը նվաճել են.

1961 «Ֆիորենտինա» (Իտալիա)
1962 «Ատլետիկո» (Մադրիդ, Իսդանիա)
1963 «Տոտենհեմ Հոտսդուր» (Անգլիա)
1964 «Սդորտինգ» (Դորտուգալիա)
1965 «Վեսթ Հեմ Յունայթեդ» (Անգլիա)
1966 «Բորուսիա» (Դորտմունդ, ԳԴՀ)
1967 «Բավարիա» (ԳԴՀ)
1968 «Միլան» (Իտալիա)
1969 «Սլովան» (Չեխոսլովակիա)
1970 «Մանչեսթր Սիթի» (Անգլիա)
1971 «Չելսի» (Անգլիա)
1972 «Գլազգո Ռեյնջերս» (Շոտլանդիա)
1973 «Միլան» (Իտալիա)
1974 «Մագդեբուրգ» (ԳԴՀ)
1975 «Դինամո» (Կիեւ, ԽՍՀՄ)
1976 «Անդերլեխտ» (Բելգիա)
1977 «Համբուրգ» (ԳԴՀ)
1978 «Անդերլեխտ» (Բելգիա)
1979 «Բարսելոն» (Իսդանիա)
1980 «Վալենսիա» (Իսդանիա)
1981 «Դինամո» (Թբիլիսի, ԽՍՀՄ)
1982 «Բարսելոն» (Իսդանիա)
1983 «Աբերդին» (Շոտլանդիա)
1984 «Յուվենտուս» (Իտալիա)
1985 «Էվերտոն» (Անգլիա)
1986 «Դինամո» («Կիեւ, ԽՍՀՄ)
1987 «Այաքս» (Հոլանդիա)
1988 «Մենչեն» (Բելգիա)
1989 «Բարսելոն» (Իսդանիա)
1990 «Սամդդորիա» (Իտալիա)
1991 «Մանչեսթր Յունայթեդ» (Անգլիա)
1992 «Վերդեր» (ԳԴՀ)
1993 «Պարմա» (Իտալիա)

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մեկնաբանում

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ԴԵՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեքշաբթի, մայիսի 11-ին Քութայիսում տեղակայված ռուսական ինժեներական գումարտակի վրա վրացական «Մխեդրիոնների» գրոհի գործողությունից հետո, որի հետևանքով դատապարտ էին վերցվել ռուս տղաների յոթ կանայք եւ մեկ երեխա եւ անարդյունք բանակցություններից հետո ռուսական գորերի կողմից ոչ կիրառվել, վրացական կողմին դատապարտելով 6 սպանված եւ 10 վիրավոր, վրաց-ռուսական բախումները շդադարեցին, հակառակ այն բանին, որ Վրաստանի ղեկավար Է. Շեւարդնաձեն զգուշացրեց, որ եթե ռուսական զորամասերի վրա հարձակումները չդադարեն, արդա անխուսափելի է Վրաստանի եւ ռուսական բանակի դիմակայությունը, որը խնդրանքի արդեն դրանում Ռուսաստանի եւ Վրաստանի որոշակի զինվորական շրջանակների շահագրգռությունը:

Չորեքշաբթի, մայիսի 12-ի երեկոյան Քութայիսի տուկայի շրջանում նոր բախում եղավ, անհայտ անձինք ավտոմատային կրակահերթով վիրավորեցին ռուսական բանակի երեք դրաստուրչիկների: Փոխհրաձգության ժամանակ վիրավորվեցին նաեւ կրակի երկու անցորդներ, որոնցից մեկը լույս հինգշաբթի գիշերը մահացավ: Վրաստանի ներգործնախարարությունում չեն բացառում, որ այդ միջադեպը կազմված լինի նախորդ օրվա դեպքերի հետ:

Վրաստանի վարչապետ Թենգիզ Սիգուան հինգշաբթի օրը երկրի հեռուստատեսությանը տված հարցազրույցում Քութայիսի միջադեպերն անվանեց սադրանք, որն, իր կարծիքով, «ընդա գրգռվել է Շեւարդնաձեի եւ Բորիս Ելցինի առաջիկա բանակցությունները»: ԻՖ





Վիկտոր Երին. «Հայաստանը կարող է անցկացնել գագաթաժողովներ»

Երեկ Ընդանրությունների տանը մի շարք դրամանագրերի ու համաձայնագրերի ստորագրումով ավարտվեց ԱՊՀ ՆԳ նախարարների հանդիպումը: Ռուսաստանի ՆԳ-ի նախարար Վիկտոր Երինը հանդիպման ավարտից հետո հայտնեց, թե ընդունվեցին այն կոնկրետ մեխանիզմները, որոնք թույլ կտան իրականացնել նախկինում ձեռք բերված համաձայնագրերը: Չէ որ, անկախ հանդիպման անցկացման վայրից՝ կոնֆիդենցիալ զրույցում, թե նրանից դուրս, գլխավոր մարդկանց իրավունքների ոչնչացումը է հանցագործությունների դեմ դայքարը: Այդ իմաստով նախարարն իր զեկուցումը հայտնեց Հայաստանում անցկացված հանդիպումից, նշելով, որ չնայած Հայաստանի եւ հայ ժողովրդի ծանր վիճակին, կազմակերպիչները ամեն ինչ արել էին բարձր մակարդակով:

Մեր այն հարցին, թե արդյոք նախարարը կարող է նաեւ խոսք ասել ԱՊՀ դեկավարներին վերջապես Երեւանում անցկացնել իրենց գագաթաժողովը, որն, Երինը առաց, թե նախագահները այդ ուրիվ որեւէ կասկած չունեն, բայց եթե Ելցինը հայտնի իր կարծիքը, ինքը կասի, որ Հայաստանում հնարավոր է անցկացնել բարձր մակարդակի հանդիպումներ:

Այդ հարցին անդրադարձավ նաեւ Հայաստանի ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանը, որը երեւանյան հանդիպումը կարեւորեց ոչ միայն երկկողմ հայաբերությունների զարգացման առումով, այլեւ այն ստորագրված փաստաթղթերով, որոնք խարիզարանների կողմից վավերացվելուց հետո լուրջ իրավական հիմք կստեղծեն համագործակցության համար: Վրաստանի ՆԳ փոխնախարար Գիյա Գոգուան ասաց, որ վրացական ՆԳՆ ուժերը վերահսկում են Հայաստան եկող ուղիները, իսկ Ուկրաինայի ՆԳ առաջին փոխնախարար Վալենտին Նեդրիգայլոն ասաց, որ սահմանվում է փաստերի բանկ, դրվում են լրատվական փոխանակության հիմքեր:

Ա. Հ.

Մոսկվայում գործում է 20 այլասերական հանցախումբ

Ինչպես մայիսի 12-ին Մոսկվայի ՆԳ գլխավոր վարչությունում կայացած բրիֆինգում հայտնեց կազմակերպված հանցագործությունների դեմ դայքարող շրջանային վարչության դեսի տեղակալ Վլադիմիր Պոնոմարենկոն, առավել ակտիվ է գործում մոտ 500 մարդուց բաղկացած չեչենական մի հանցախումբ, ինչպես նաեւ մոտ 60 մարդուց կազմված դաղստանական, 200-ից ավելի մասնակից ունեցող ադրբեջանական եւ այլ հանցախմբեր: 1992 թ. տվյալներով, Մոսկվայում արձանագրվել է ազդեցության դորտեներ կիսող հանցախմբերի 29 զինված բախում: Այս տարվա 4 ամսում արձանագրվել է այդդիսի 7 բախում: 1993 թ. չորս ամսում դաստախանատվության են կանչվել Վրաստանի 193 բնակիչ, 211 ադրբեջանցի, 36 չեչեն, Ուկրաինայի 167 քաղաքացի:

Հանցագործությունները արագ տեմպերով է աճում հանցագործության այնդիսի մի ձեւ, ինչդիսին է դատանդների առեւանգումը եւ փրկագնի դահանջումը: 1992 թ. 21 հրեական գործ է հարուցվել դատանդների առեւանգման դատճառով, իսկ 1993 թ. չորս ամսում եղել է այդ կարգի արդեն 22 գործ: Կազմակերպված հանցագործությունների դեմ դայքարի շրջանային վարչության դեսի Միխայիլ Սանցովը գանգատվեց այն բանից, որ անհրաժեշտ օրենսդրական հիմք չկա մեծաքանակ արտասահմանի երկրներից եկած հանցագործների դեմ հաջողությամբ դայքարելու համար: ՆՏ



Լուրերի հոսք

Ռուսաստանը ճանաչեց Էրիթրեայի անկախությունը

Ռուսաստանը ճանաչեց Էրիթրեան որպես ինքնուրույն, ինքնիշխան եւ անկախ դետություն: Ինչպես հաղորդեց նախագահի մամուլի ծառայությունը, համաձայնագիր է ստորագրել Բորիս Ելցինը: Այդ որոշումը դայմանավորված է անկախության հանրաքվեի արդյունքներով, որոնց համաձայն, 1993 թ. մայիսի 24-ին հռչակվում է նոր դետություն, Էրիթրեա: Ռուսաստանի արտգործնախարարությանը հանձնարարվում է բանակցություններ վարել Էրիթրեայի դեկավարության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ դեսդանությունների մակարդակով դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակելու վերաբերյալ: ԻՖ

1500 մարդ ցանկանում է ներգաղթել Լիտվա

Օրերս Լիտվայի կառավարությունը որոշում ընդունեց, որի համաձայն 1993 թ. Լիտվա կարող են ներգաղթել 2500 մարդ: Մինչդեռ ներքին գործերի նախարարության տվյալներով, արդեն հիմա Լիտվայում բնակություն հաստատել ցանկացողների թիվը հասնում է 1500-ի: Մշտական բնակություն հաստատելու առավելությունը կստանան այն օտարերկրացիները, որոնց ընտանիքների անդամները Լիտվայի Հանրապետության քաղաքացիներն են: Սնարք

2 միլիարդ ռուբլի Էստոնիայի բանկի նկուղներում

Դեռ չի լուծվել 2 միլիարդ ռուբլու խնդիրը, որոնք մինչեւ այսօր դահվում են Էստոնիայի բանկի նկուղներում: Միջկառավարական դայմանագրի համաձայն, որը կնքվել էր անցյալ տարի հուլիսին դրամային բարեփոխման օրը, Էստոնիայի Հանրապետությունը դարտավորվում էր Ռուսաստանին հանձնել ռուբլիները, սակայն այդ մասին ոչ մի կանխատեսման չկար: Այժմ յուրահանչյուր կողմը փորձում է օգուտ քաղել: Սնարք

Պետերբուրգում հավաքվել է անօթեւանների 600 դիակ

Սանկտ Պետերբուրգ, 13 մայիս. Սնարք: Ինչպես հաղորդում է «Ռադիո Բալտիկան», «Նոչլեժկա» բարեգործական հիմնադրամը վերլուծել է քաղաքի առաջին դիարանում ստացված տվյալները: Անցյալ տարի դրում հավաքվել է ավելի քան 600 դիակ, այդ թվում 435-ը տղամարդու եւ 89-ը կնոջ: Գրեթե կեսը 30-50 տարեկաններ են: Մահվան ամենատարածված դատճառը սրտի նոդան է (150 մարդ): Ճունավորումներից (այդ թվում ալկոհոլային) մահացել է 118, խեղումներից՝ 55 մարդ, սդանվել է 31-ը: Քաղցկեղից մահացել է 3, տուբերկուլյոզից՝ 2 մարդ: Այս ամփոփագրում նշված բոլոր մարդիկ հայտնաբերվել են անմիջականորեն փողոցներում, կայարաններում, օդանավակայանում, ձեղնահարկերում, նկուղներում եւ ծովափին, բակերում եւ կառույցներում, այսինքն այնտեղ, որտեղ ամենից հաճախ աղրում են բնակության որոշակի վայր չունեցող մարդիկ:

Գլխավոր խմբագիր
ՏԻԳՐԱՆ ԱՐԵՏՈՒՐՅԱՆ / հեռ. 521635
խմբագիր
ՀԱՍԼԻՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ / 581841
Տնօրեն
ԱՄՈՒՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ / 562663
Apple* Macintosh* համակարգչով շարվածք «Ազգ» թերթի
Az9 անկախ daily
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
Թերթի ձեւավորումն եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@